

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ԱՐՎԵՍՏԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՍԵՂԱ ԱՆԱՆՅԱՆ

ԿՈՍՏԱՆ ԶԱՐՅԱՆ

ՀՈՒՇԱԳՐՈՒԹՅՈՒՆ

(Երկրորդ լրամշակված հրատարակություն)



ԵՐԵՎԱՆ  
ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
2022

ՀՏԴ 821.19.0  
ԳՄԴ 83.3(5Հ)  
Ա 573

Հրատարակվում է ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի  
գիտական խորհրդի որոշմամբ

Անանյան Սեդա

Ա 573 Կոստան Զարյան: Հուշագրություն / Ս. Անանյան.- (Երկրորդ լրամշակված հրատարակություն).- Եր.: «Գիտություն» հրատ., 2022.- 82 էջ + 8 էջ նկ.:

Վաստակաշատ լրագրող Սեդա Անանյանը 1960-ական թթ. աշխատել է մեծանուն գրող Կոստան Զարյանի հետ, ինչը հնարավորություն է ընձեռել գրքի հեղինակին մոտիկից ճանաչելու նրան և լավագույնս ներկայացնելու գրողի կյանքի և գործունեության ուշագրավ մի շարք դրվագներ:

Հուշագրությունը հասցեագրվում է գրականության և արվեստի մասնագետներին, ինչպես նաև ընթերցող լայն հանրությանը:

ՀՏԴ 821.19.0  
ԳՄԴ 83.3(5Հ)

ISBN 978-5-8080-1493-0

© Անանյան Սեդա, 2022

# ՏԱՐՈՂՈՒՆԱԿ ԵՎ ԿԱՐԵՎՈՐ ՄՏՈՐՈՒՄՆԵՐ

## ԿԱՄ ԱԲՈՎՅԱՆ 17

Ընթերցողին առաջարկվող Սեդա Անանյանի հերթական գիրքը, որ կրում է «Կոստան Զարյան. Հուշագրություն» վերնագիրը, հեղինակի բազմերանգ ու հարուստ կյանքի մի հատվածն ընդգրկող պատում է, որն ամփոփում է 1966-67 թթ. ժամանակաշրջանը, որն առնչվում է մեր գրականության ու մշակույթի հսկաներից մեկի՝ Կոստան Զարյանի երևանյան կյանքին:

Գիրքը բաղկացած է տասնմեկ գլուխներից՝ փոքրածավալ, բայց տարողունակ ու կարևոր գրառումներ, որ մի կողմից բացահայտում են հեղինակի կյանքի մի կարճ հատվածի ուշագրավ դրվագներ, մյուս կողմից՝ խոսք են հայ մշակույթի ու գրականության նշանավոր մարդկանց մասին, որոնց թվում հառնում է Կոստան Զարյանի մարդկային ու մշակութային նկարագիրը:

Սեդա Անանյանի համար առանձին ու կարևոր ոլորտ է Կոստան Զարյանի կյանքի ու գրականության մի որոշ շրջանի մեկնաբանումը, որի վերաբերյալ «Նոր Յառաջ» թերթի 2016 թ. հունվարյան համարներից մեկում՝ Նա իր այդ նվիրումը անվանում է «պարտաւորեցնող զգացողութիւն»՝ տածված «հայրենապաշտ բարձր մտաւորականի» նկատմամբ:

Այդ նվիրումը նրա մեջ սկզբնավորվել է 1960-ականների կեսերից, երբ Նա կարդացել է 1928-ին Բոստոնի «Հայրենիք» ամսագրում տպագրված գրողի «Անցորդը եւ իր ճամբան» հուշագրություն-ուղեգրությունը: Սկսած այդ շրջանից՝ արվեստի, մշակույթի ու գրականության ասպարեզներում ինչ աշխատանքներ էլ որ կատարել է Սեդա Անանյանը, նրա համար որպես անբաժան էություն և ուղեցույց եղել ու շարունակում է մնալ Կոստան Զարյանի՝

որպես գրող, մտավորական ու գործիչ, ամեն բան դասականության աստիճանի բարձրացրած գրավիչ կերպարը:

Մի մարդ, որ «Անցորդում» գրել է. «Հայ կյանքի համար այսօր, ինչպես երեկ, Սարգսրապատը փորձութեան դժվարին դաշտ է, Արարատը՝ լուսավորող գաղափարը»:

Կ. Ջարյանին վերաբերող Ս. Անանյանի խոսքը, մատուցման առումով լինելով հետաքրքիր ու գրավիչ, առանձնանում է նրանով, որ այն հավաստի վկայաբանություն է նաև Իսահակյանի, Աճեմյանի, Դեմիրճյանի և հայ մի շարք այլ մեծերի կյանքի ինչ-ինչ իրողություններին վերաբերող. միշտ գրված չափավոր ու ճաշակավոր ընտրությամբ:

Կ. Ջարյանի մի միտքը, թե. «Հայրենիքը սիրելու և նրան փառաբանելու կան ուրիշ խոսքեր և ուրիշ կեցվածք», Ս. Անանյանի համար դարձել է գործունեության ուղենիշ, որին նա հավատարիմ է մինչև օրս:

Ներկայացվող գրքում Կ. Ջարյանի վերաբերյալ Անանյանը, կենսագրական և գրական կարևոր տվյալներ գրառելուց զատ, հաղորդում է նաև մանրամասներ, որ առաջին հայացքից թվում է, թե երկրորդական են, բայց դրանք կուտակվում ու լրացնում են մեծ գրողի դիմանկարը, բացահայտում նրա մտածողության ու ապրելակերպի ուշագրավ հատվածներ, որոնք մեկ ուրիշը չէր կարող կատարել ու փաստել, քան հենց ինքը՝ Անանյանը, որ մասնակիցն ու ականատեսն է եղել այդ ամենի: Օրինակ՝ ինչ ասեք, որ չարժե Անանյանի վկայությունը Կ. Ջարյանի «Սպանիա» գործի ծագումնաբանության, գրության հետ կապված խնդիրների, շոշափած հարցերի ու գրքի ողիսականի վերաբերյալ, և կամ փաստումը իսպանացի հանրահայտ գրող Միգել դը Ունամունոյի կողմից Ջարյանին Իսպանիա հրավիրած լինելը, Կենտկոմի քարտուղար Յակով Ջարոբյանի կողմից գրողի 6 հատորյակի տպագրման որո-

շումը, և կամ գրողի մի այսպիսի մտքի արտահայտումը. «Անկեղծ ասած բանաստեղծություններս կ'իսանդեմ» ու այդ պատճառով՝ առանձին գրքով տպագրել չուզենալը: Ս. Անանյանի կողմից մեկ այլ, ավելի կարևոր հաստատում՝ Շամախիում Զարյանների տան անդամների լեզուն ռուսերենն է եղել, բայց ծառաների հետ խոսել են հայերեն, որը ջրում է այն տարածված կարծիքը, թե Զարյանը, որ հինգ տարեկանից է տարվել այդ տնից, միայն 25 տարեկանում է սկսել սովորել հայերեն խոսել:

Ներկայացվող գրքում Անանյանը դրսևորում է բանիմաց գրականագետին բնորոշ նաև այն առավելությունը, որը գրողի երկերի լավագույն մտքերի ու գեղարվեստական հատվածների ընդգծմանն է առնչվում: Ահա Անանյանը գրում է Զարյանի «Սպանիա» գործի հետ կապված խնդիրների մասին, բայց հանկարծ, իր խոսքով ասած, «շեղվում» է ու մեջբերում կատարում Զարյանի այդ գործից, որը ոչ միայն ինքնին գեղարվեստական գրավիչ, այլև Զարյան մարդուն ու հայրենասերին բնութագրող, նրա ազգասիրական ու մտածական մեծ աշխարհը պարզաբանող կարևոր ապացույց է, որը և ուզեցել է շեշտել Անանյանը. «Այս երկրագնդի վրա բոլոր ապրած երկրներից Հայաստանն այն աշխարհն է, որ ամենից քիչ եմ կանգ առել: Ուր չեմ իսկ ծնվել, և ուր մարդիկ նայում են ինձ... օտարի աչքերով: Եվ, սակայն, ինչպե՞ս ասեմ այդ. ես նրան գիտեի նրան տեսնելուց առաջ եւ երբ տեսա, նա վաղուց սպասող սիրուի ու նման բաց արեց ինձ այնպիսի գաղտնիքներ, որոնց մասին գաղափար չունեին և չունեն տարիներով նրա շուրջ ապրողները...»:

Ս. Անանյանի հուշերն ու վկայությունները, որոնք նա «մտորումներ» է անվանում, իհարկե, առնչվում են իր կյանքի այն շրջանին, երբ ինքը մեքենագրում էր Կ. Զարյանի լավագույն գործերի մեկը՝ «Սպանիան»: Լինելով քնարական խառնվածքի տեր, ունե-

նալով գրական ճաշակ, բնականաբար, Անանյանը չէր կարող չմտասնելովել այդ գրքի հատկապես առինքնող մյուս էջերի վրա: Եվ ահա նա մեջ է բերում «Սպանիայից» մի հատված, որը ոչ միայն արվեստի որևէ բնագավառի, այլև ողջ հայ մշակույթին տրված խոր ու համակողմանի բնութագիր է, Զարյանին բնորոշ մտքի թռիչք. «Միջնադարյան վարպետները, որոնց մեջ նաև մեր մանրանկարիչները, նկարը սկսելուց առաջ ծոմ էին պահում և աղոթքներով պատրաստում իրենց հոգին: Նրանց համար գույները փշրելը, խառնելը, բաղադրելը նույնքան սրբազան էր և արարողական, ինչքան սրբազան է և արարողական պատարագչի զգեստավորումը»:

Գրքի ուշագրավ հատվածներից են նաև Լևոն Ներսիսյանի դիմանկարը պարզող էջերը: «Բացառիկ անհատականություն» (Ս. Անանյանի բնութագիրն է) ներկայացնող այդ մարդուն, մտավորականին, դասախոսին, անհատին, իրոք այլ կերպ չես կարող բնութագրել, թեև այդ բնութագիրը ևս ամբողջությամբ չի սպառում նրա ողջ նկարագիրը, քանի որ անսպառ էին այն արժանիքները, որ նա ուներ և շռայլորեն բաժին էր հանում իրեն ճանաչ և ոչ ճանաչ շրջապատին: Մեզանից՝ ավագ սերնդից, ո՛վ չի հիշում նրան «Երևան» հյուրանոցի բացօթյա սեղաններին նստած ու տարված արվեստի, գրականության, մշակույթի վերաբերյալ ծավալվող ոգեղեն զրույցներով, Երևանի պետական համալսարանում անպայմանորեն այլևայլ բուհերից եկած ուսանողների ներկայությամբ կարդացվող դասախոսությունները (որոնք լոկ դասախոսություններ չէին, այլև բեմադրում, դերասանական խաղ, մենախոսություն ու ոգեղեն թևածումներ): Ուսանողներից քննությունների ընդունումն էլ մի այլ երևույթ էր, որն ուղեկցվում էր բարձրորակ կոնյակի փոքր ումպերով (ղեկավարությունից ոչ մեկը չէր համարձակվում նրան դիտողություն անել): Իսկ Ներսիսյանին սեղանա-

կից լինելու բախտը ունեցած մարդկանց համար միշտ անմոռաց են մնացել շոայլորեն սփռվող նրա խոսքն ու գրույցը, ինչպես և «Երկունք» ֆիլմում թեև էպիգոդիկ, բայց այնքան ողբերգական և այնքան խորքային դատողությունները:

Ս. Անանյանի հայեցակետում ու նրա ընկալումներում, ինչպես աչքի ոսպնյակում, խտանում ու առանձնանում են Լևոն Ներսիսյանի նկարագրի նաև այլ հատկանիշներ: Այսպես, Անանյանը ցավով գրում է, որ Լ. Ներսիսյանի իմացությունները մնացին բանավոր, շրջանի մտավորական աստղաբույլերից մեկի՝ Լևոն Հախվերդյանի խոսքերով ասած՝ «օդում թռչնված», և դա իրոք այդպես է, բայց ոչ ամբողջովին. այդ «բանավորից» շատ բան մնաց սերունդների հիշողության մեջ, ասես քարի վրա փորագրված՝ սկսնակ կամ արդեն վաստակ ունեցող նկարիչների գործերում որպես ներսիսյանական գույն ու երանգ, քանդակագործների աշխատանքներում՝ ձև ու կառուցվածք: Եվ կարծում ենք, որ բոլորովին էլ չափազանցած չենք լինի, եթե ասենք, որ Լևոն Ներսիսյանն իր բազմահարուստ իմացություններով ու հայ մտավորականի կերպարով իրոք Երևան քաղաքի ոգին էր, որ ուր էլ որ լիներ, հմայք ու խորագիտություն էր դրսևորում, մանավանդ անտիկ կյանքի իմացություններ:

Այս գրքում Սեդա Անանյանի՝ որպես արվեստագետ, գրականագետ և մշակութաբան բնորոշող հատկանիշներից մեկն էլ օտարազգի հայագետների, որոնցից շատերի հետ անձամբ է շփվել ու ճանաչել, կատարած աշխատանքների բազմակողմանի ներկայացումն է, նրանց կատարած գործի նորովի գնահատումը, դրանով իսկ նաև նրանց նկատմամբ մեր ժողովրդի երախտագիտության դրսևորումը:

Վերոհիշյալ արժանիքները, որոնց կարելի է էլի հավելել, գալիս են հաստատելու, որ Սեդա Անանյանի այս գիրքը անպայ-

մանորեն գտնելու է իր ընթերցողներին և նրանց մեջ ավելի է բորբոքելու սեր ու համակրանք նրանց նկատմամբ, ովքեր մեծ էին ոչ միայն գործով, այլև հավատով ու նվիրումներով: Մնում է այս հեղինակին մաղթել աշխատանքային նոր եռանդ, քանի որ լուսաբանման կարիք ունի մեծ հոգիների ամեն մի օրը, այդ թվում և Կոստան Զարյանինը:

***Արծրուն Ավագյան  
բ.գ.դ., պրոֆ.***



## ԱՆՏԵՍ ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ

*«Հայ կյանքի համար այսօր, ինչպես երեկ,  
Սարգսրապատը փորձության դժվարին դաշտն է,  
Արարատը՝ լուսավորող գաղափարը»  
«Անցորդը», Կ. Ջ.  
«Հայրենիք», 1927, № 7*

Հայ մեծատաղանդ գրող, բանաստեղծ, արվեստաբան-փիլիսոփա Կոստան Զարյանի (1885–1969) հետ իմ առաջին անտես հանդիպումը եղել է 1965-ին, կարդալով նրա «Անցորդը եւ իր ճամբան» (ուղղագրությունը ըստ հեղինակի – Ս.Ա.) վեպը «Հայրենիք» ամսագրում:

Ինչպես հայտնի է, մինչ 60-ականները Սովետական Հայաստանում ոչ միայն սփյուռքահայ մամուլը («Բազմավեպ», «Հանդես ամսօրյա», «Հայրենիք», «Անահիտ», «Հառաջ», «Ապագա», «Ամենուն տարեցույց» են), այլև կովկասահայ «Մշակ», «Գեղարվեստ», «Մուրճ» են անմատչելի ու արգելված էին հասարակությանը, փակված Հանրային գրադարանի «Հատուկ ֆոնդ», «Անձեռնմխելի», «Հնատիպ և արխիվային» բաժիններում: Ավելի ուշ մատչելի «հատուկ» գրությամբ՝ խիստ սահմանափակ հետազոտողների, որ տրվում էր գիտական հիմնարկի դիրեկտորի, կուսքարտուղարի և արհմիության նախագահի ստորագրությամբ՝ նշելով՝ «բարոյապես հաստատուն, քաղաքականապես վստահելի»:

1965–85-ին աշխատանքի բերումով բարեբախտաբար ես ունեցա նման թույլտվություն, նախ՝ ԳԱ արվեստի ինստիտուտից՝ կազմելու սփյուռքահայ արվեստի տարեգրություն՝ ղեկավար ունենալով հայ թատրոնի երախտավոր Գառնիկ Ստեփանյանին (1909–1988), ապա՝ Հայկական հանրագիտարանից՝ արվեստի և ճարտա-

րապետության նյութեր համալրելու և հայթայթելու հայ մշակույթի վերաբերյալ գրադարանի «փակ ֆոնդերից»:

Դա խիստ աշխատատար, բայց գրավիչ աշխատանք էր, քանի որ հնարավորություն ունեի ժամանակի «սոցիալիստական ռեալիզմի» անկոնֆլիկտ ու միապաղաղ գրականությունից զատ վերջապես կարդալու «արգելված» հայ հեղինակներին:

Հանրային գրադարանի «Հատուկ բաժնի» փոքր ընթերցասրահում շատ մարդ չէր լինում, որ այլևս դառնալու էր իմ ամենօրյա աշխատավայրը, իսկ աշխատակիցներն իրենց բնավ էլ «հատուկ» չէին պահում: Բաժնի վարիչն էր Գուրգեն անունով շատ բարի մի մարդ, որին գործընկերները մեղմորեն «կոլոտ Գուրգեն» էին անվանում:

Ի դեպ, այդ գրադարանում խստագույն կարգ ու կանոն էր պահպանվում: Արժե հիշել, քանի որ դա սկսվում էր շենքի մուտքից իսկ: Գեղեցիկ նախամուտքը (այդ կառույցը Ալեքսանդր Թամանյանի սքանչելի գործերից է), որի նախասրահը ամենայն դաժանությամբ հսկում էր Նիկոլը: Փոքրամարմին, շարժուն այդ մարդուկը մշտապես կրում էր մուգ կանաչ տարօրինակ համազգեստ, և ինչպես ասում են, «օձն իր պորտով, դուշն իր թևով» չէր կարող գրադարան թափանցել առանց տոմսի:

Գրադարանի հնագույն աշխատակիցներից մեկը մի օր շուկով ասաց, որ Նիկոլը ԿԴԵ-ում ժամանակին եղել է մահվան դատապարտվածների պատիժն իրականացնողը և մինչև օրս հավատարմորեն կրում է ԿԴԵ-ի նույն համազգեստը:

Եվ այսպես, մեր Երկրի ոչ հեռավոր անցյալի տխուր պատմության գաղտնի էջերը ինձ համար սկսեցին լուսավորվել «Հատուկ բաժնի» փոքր ընթերցասրահում, որտեղ ծանոթացա նաև Կոստան Զարյանի գործերին՝ դառնալով իմ ամենօրյա հետաքրքրության նյութը:

Պիտի ասեմ՝ քիչ է ասել հետաքրքրություն. Ջարյան ականատես-գրողի՝ 1920-ական թվականների բոլշևիկյան կարգերի քաղաքական իրադրության, մարդկանց հոգեբանության ու պահվածքի իրատես-հավաստի նկարագրությունը ինձ զարմացրել ու կլանել էր հիմնովին:

Բռնության ու արքայի այդ դաժան տարիներին իմ ընտանիքը կորցրել էր իր ինը մերձավոր հարազատներին. տանը այդ մասին խոսվում էր շուկով կամ լուռ հառաչանքով: Եվ ահա Կոստան Ջարյանն այդ ամենի մասին ըմբոստ ու համարձակ խոսում է կարծես ի՛մ և իմ ընտանիքի հոգու խորքից: Կարճ հատված «Անցորդից».

*...Բոլշևիզմը ծնված է ոչ թե, ինչպես շատերը կարծում են, ինչպես առաջ կարծում էի ես ևս, վերջին հարվածը տալու համար մեռնող այս աշխարհին, այլ ընդհակառակը, բռնության ուժով շարունակելու նրա հոգեւարքը:*

Եվս ցնցող մի հատված.

*– Բարձրագույն հրամանով Լենինի հուղարկավորությունը պիտի կատարւի բոլոր քաղաքներում եւ գիւղերում՝ նոյն ժամին:*

*Ժամը 4 1/2-ին գործարանները Միութեան երկրներում եւ դուրսը պիտի սուլեն նոյն ժամին:*

*50000 կարմիր դագաղներ պիտի անցնեն թնդանօթներով շրջապատւած: Զորքերը պիտի կրակեն, եւ բորոզաները ձայնեն:*

*Արմիայի փողոցի վերի կողմից պարսպ դագաղը երերում է կոմիսարների ուսերի վրայ:*

*Զինվորական նւագախումբը Շոպենի թոքերն է պատռում:*

*Թնդանոթներ:*

*Սայլերի վրա զարմացած գիղացիներ են նստել:*

*Երաժշտական ստուդիան Մոցարտ է երգում: Պարսպ դագաղը սեւերով ծածկւած ամբիոնի առջեւն են դնում եւ չորս ժամ*

ճառ են ասում:

*Իսկ Արարատը պայծառ է եւ անտարբեր»*

«Անցորդը», «Լենինը մեռել ա»...

\* \* \*

Այդ օրը՝ ընդամիջման ժամին, ցնցված ու մտահոգ փակեցի «Հայրենիքը» և թղթերիս տակ դնելով՝ դուրս եկա նախաճաշի: Նախասենյակում աշխատակիցներ Մարգոն և Քնարիկը անհոգ իրենց նախաճաշն էին անում՝ ինձ նույնպես հրավիրելով մասնակցել: Ես շնորհակալություն հայտնեցի և «հանգստացած» բուժետ իջա:

Հաջորդ օրը շարունակելով «Անցորդը»՝ հիացման հետ միաժամանակ մտածեցի՝ չլինի՞ այս իրավունքը ինձ տրվել է՝ ստուգելու «քաղաքականապես վստահելի», «բարոյապես հաստատուն» լինելս...

Այդ տարիներին, ճիշտ է, Ստալինը քննադատվում էր արդեն, բայց Լենինը մնում էր «անձեռնմխելի». ո՞վ կարող էր համարձակվել: Ավելին, մինչև 1980-ականները մամուլի էջերում հաճախ էր հայտնվում Լենինի մեծադիր պատկերը՝ անվանի մտավորականների փառաբանություններով, իսկ 1966-ի ապրիլի 22-ին «Գրական թերթը» ծավալուն հոդված հրապարակեց «Խորհրդային Հայաստանի պոետները Վ. Ի. Լենինին» վերնագրով, «առաջնորդի» մեծադիր պատկերներով. մինչդեռ Ջարյանը մեզ ճիշտ հակառակն է ասում 1927-ին:

Վեպի ավարտին տետրիս մեջ «Սևան» հատվածից արտագրել եմ հետևյալ սրտամոտ հատվածը նույնպես.

*– Սեւանը մոտ է բոլոր աշխարհներին, որովհետեւ նա բարձրաբարձր հոգեկան կայան է, որտեղ կուտակվում են հիւսիսից եւ հարաւից, վերից եւ վարից եկող բոլոր հոսանքները եւ որտեղից աննշմարելի հոգեկան հոսանքներ են անցնում դեպի աշխարհիս*

*ճակատագիրը կանոնավորող վայրերը»:*

Հուզված ու ցնցված 1965-ի դեկտեմբերի 2-ին փակելով «Հայրենիքը»՝ տետրիս մեջ գրել եմ իմ համեստ խոսքը. վեպի ընդհանուր գաղափարը և նպատակը Զարյան գրողի համար մեր ազգային արժեքների ճանաչման ու նրան հավատարիմ մնալու խնդիրն է, որ պարտավոր է ամեն հայ մարդ:

\* \* \*

Արվեստի ինստիտուտում իմ աշխատանքի առաջին տարիներն էին, որ ուշիուշով կազմում էի պահանջված նյութերի ցանկը «արգելված» մամուլից, ի թիվս «Հայրենիքի», որտեղ հանդիպեցի Կոստան Զարյանի նաև արվեստաբանական ուշագրավ հոդվածներին.

- Ե. Վախթանգյանը և իր թատերական ստուդիան:
- Հայաստանի նկարիչները:
- Բյուզանդագետների համագումարը և հայերը նև:

1927-ին լույս տեսած այս հոդվածներից ինձ առանձնապես հետաքրքրեց Վախթանգովը (1883–1922): Զարյանի կենսագրությանը դեռ անծանոթ, մտածեցի՝ Բոստոնի «Հայրենիք»-ն ո՛ր, ռուսահայ Վախթանգովն ո՛ր...

Բուն նյութից ևս շեղվելով՝ նշենք, որ հիշյալ մոսկովյան թատրոն-ստուդիայի հիմնադիրն ու ղեկավարն է եղել Ստանիսլավսկու աշակերտ ու հետևորդ հայազգի Եվգենի Վախթանգովը: Ստուդիան հետագայում կոչվեց «Վախթանգովի անվան թատրոն», որտեղ աշխատել ու նրանից հետո ղեկավարել են ռուս թատրոնի (նույնպես հայազգի) անվանի գործիչներ, դերասան-բեմադրիչներ Նիկիտա Բալինը (Մկրտիչ Բալյան), Նիկոլայ Տարասովը (Թորոսյան), հայր և որդի Ռուբեն և Եվգենի Սիմոնովները (Սիմոնյան), բեմանկարիչ, արվեստի տեսաբան Գեորգի Յակուլովը և ուրիշներ:

Շեղվեցի՝ ասելու, որ Զարյանի անունն այդ ժամանակ տպավորվեց իմ մեջ ոչ միայն իբրև ինքնատիպ, բազմաշերտ ու համարձակ գրող, այլև խորաթափանց արվեստաբան-փիլիսոփա:

Ուրիշ խոսք, որ «Հայրենիքը» (օրաթերթ թե ամսագիր)՝ որպես «արգելված պտուղ», ինձ ստիպում էր գրադարանում մնալ մինչև ուշ ժամեր՝ «հայտնագործելու» մինչև այդ միայն անունով ինձ ծանոթ հայ հեղինակներին:

\* \* \*

Արվեստի ինստիտուտն այդ տարիներին զբաղեցնում էր Աբովյան և Սայաթ-Նովա փողոցների խաչմերուկի գողտրիկ շենքը, որ բարբարոսաբար հետագայում քանդվեց:

Ինստիտուտի տնօրեն Ռուբեն Զարյանը, որին իրավամբ կոչել են գիտության կազմակերպիչ, գլխավորում էր իր ստեղծած Շեքսպիրագիտական կենտրոնը, իսկ անդամներից էին Խաչիկ Դաշտենցը, Նշան Մուրադյանը, Հենրիկ Սևանը, Բյուրակ Անդրեասյանը և այլք:

Այդ կենտրոնն իր գիտակ անձնակազմով և արդյունավետ գործունեությամբ Միության մեջ համարվում էր շեքսպիրագիտության կարևոր օջախ, որի գիտաժողովներին հաճախ ներկա էին նաև Հայաստանում ճանաչված անվանի մտավորականներ, ինչպես և օտար երկրներից շեքսպիրագետ-թարգմանիչներ, գրականագետներ:

Այսպես, հերթական մի նիստից առաջ տնօրենի նախասենյակում բոլորիս ուշադրությունը գրավեց բարձրահասակ, վեհատեսիլ, ալեհեր անծանոթ մեկը, որ Ստանիսլավսկուն էր հիշեցնում:

Դա ինքը՝ Կոստան Զարյանն էր, որին առաջին անգամ էի տեսնում: Այնուհետև նրան հաճախ էի տեսնում Աբովյան փողոցով նկարիչների սրճարան գնալիս, երբ անցորդները կանգ էին առնում՝ նայելու այդ վայելչատես, պատկառելի անծանոթին:

# **ԻՏԱԼԱՅԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ**

## **(Ծանոթություն Կոստան Զարյանի)**

Հայ դասական ճարտարապետությունն իր ուրույն բնույթով բազմիցս է արժանացել օտարազգի գիտնականների ուշադրությանը, որոնց ուսումնասիրություններն անգնահատելի ավանդ են մեր մշակույթի պատմության մեջ:

1960-ականներից հայանպաստ այդ գործի շարունակողներից եղան Հռոմի համալսարանի միջնադարյան պատմության պրոֆեսորներ Գ. Արգանը և Ջեզա դե Ֆրանկովիչը, որոնց ղեկավարությամբ հետևողական աշխատանք էր տարվում Մերձավոր Արևելքի երկրների մշակույթի ուսումնասիրության ուղղությամբ:

Ճարտարապետների մի խումբ այդ համալսարանից ուսումնասիրում էր հին իրանական, սիրիական, ուրարտական և հնագույն այլ ժողովուրդների պատմական մշակույթը:

Ջեզա դե Ֆրանկովիչի ղեկավարությամբ իտալերեն և եվրոպական այլ լեզուներով հրատարակության էր պատրաստվում հայկական ճարտարապետության պատմությանը նվիրված նույնպես խոշոր աշխատություն:

Այդ նպատակով Հռոմի համալսարանի և ՀՍՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտի նախաձեռնությամբ և Արմեն Զարյանի (Կոստան Զարյանի որդին) ղեկավարությամբ 1966-ի ամռանը առաջին անգամ Հայաստան ժամանեցին իտալացի չորս ճարտարապետներ՝ Պաոլո Կունենո, Թոմազո Բրեջջա-Ֆրատադոկին, Ջանլուիջի Նիգրոն և Մաուրիցիո Գաուդին:

Հիշենք, որ դա սկիզբն էր միայն հայ-իտալական ճարտարա-

պետ-գիտնականների համագործակցության՝ հայկական ճարտարապետության պատմությունը համաշխարհային ճանաչման արժանացնելու, որ շարունակվեց շուրջ երեք տասնամյակ (այս մասին կխոսենք ավելի ուշ):

\* \* \*

Իտալիայում գիտական նախնական հետազոտություններից հետո ճարտարապետների խումբն արդեն մեկնել էր Արևմտյան Հայաստան՝ ուսումնասիրելով Վանի, Էրզրումի, Մուշի և այլ գավառների հայկական հուշարձանները, կատարելով համապատասխան չափագրություններ, լուսանկարներ: Նրանք մեզ պատմեցին նաև, որ տեղում հաճախ են հանդիպել անբարյացակամ վերաբերմունքի, ինչպես օրինակ՝ արգելելով իրենց մուտքը Ղարսի Առաքելոց եկեղեցի, որ պահեստի էր վերածված: Իսկ երբ նրանց ասացին, որ իրենք իտալացի ճարտարապետներ են, թուրքերը պատասխանել են.

– *Եթե շատ կուզեք, մտե՛ք, բայց այլևս դուրս գալ չեք կարող...*

\* \* \*

Արվեստի ինստիտուտի ողջ անձնակազմը անշուշտ մեծ հարգանքով ընդունեց հարգարժան հյուրերին:

Ինստիտուտի փոխտնօրեն Սաբիր Ռիզանը (1924–1978), ազգությամբ ոչ հայ, բայց հայ թատրոնի երախտավորներից, անչափ բարեկիրթ և համակրելի մի անձնավորություն, ինձ կանչեց իր առանձնասենյակը՝ ասելով.

– *Վաղվանից քեզ ազատում ենք ինստիտուտի պարտականություններից, աշխատելու ես Արմեն Զարյանի հետ, մինչև խալացիների մեկնելը: Պետք է ուղեկցես նրանց, թարգման լինես (նրանք բոլորն էլ հրաշալի ֆրանսերեն էին խոսում) և օգնես Արմենին:*



Դժվար էր պատկերացնել ավելի հետաքրքիր առաջադրանք. այցելել մեր պատմական հուշարձանները՝ լսելով մեր անվանի ճարտարապետների մեկնաբանությունները, և թե ինչպես է Արմեն Զարյանն այդ բոլորը նրանց իտալերեն թարգմանում (համալսարանում ֆրանսերենից հետո որպես երկրորդ օտար լեզու իտալերեն էինք սովորել, և այժմ առաջին անգամ կարող էի լսել բարեհունչ իտալերենը):

\* \* \*

Հայաստանում հարգարժան հյուրերին մեծ աջակցություն ցուցաբերեցին մեր անվանի գիտնականները՝ նախ ջերմ ընդունելությամբ և ճարտարապետության ու մշակույթի իրենց կարևոր դասախոսություններով, իհարկե այդ ամենը Արմեն Զարյանի ղեկավարությամբ: Արմենի ուղեկցությամբ իտալացիները եղան Մատենադարանում, Պատմության թանգարանում, ճարտարապետության նախագծային ինստիտուտներում:

Շուրջ երկու ամիս անընդմեջ անվանի ճարտարապետներ Ալ. Սահինյանի, Վ. Հարությունյանի, Ստ. Մնացականյանի, Հ. Խալփախչյանի, Կ. Հովհաննիսյանի և Մ. Հասրաթյանի ուղեկցությամբ այցելեցին Հայաստանի կարևոր հուշարձաններ՝ կատարելով համապատասխան չափագրություններ. Գառնի, Արմավիր, Արտաշատ (նախաքրիստոնեական շրջան), Քասախ, Տեկոր, Երեբույք, Եղվարդ, Աշտարակ... (բազիլիկ), Էջմիածին, Մաստարա, Բագարան, Հռիփսիմե, Սևան, Կեչառիս, Սանահին, Հաղպատ... (կենտրոնագմբեթ) և այլ հուշարձաններ:

\* \* \*

Իտալացի ճարտարապետների ոգևորությունն իր հերթին շատ մեծ էր: Վերջին գիտաժողովին խմբի ղեկավար Թոմազո Բրեջջան իր շնորհակալական խոսքում ասաց.

«Տպալորությունը Հայաստանից անսահման է: Ակնկալիքներն ու հիացումները՝ նույնպես: Հայաստան գալով մենք գիտեինք, որ պիտի հանդիպենք հնադարյան մշակույթի և հոգևոր մեծ հարստությունների տեր մի ժողովրդի, սակայն այն, ինչ տեսնում ենք այստեղ, աներևակայելի էր մեզ համար:

Հայաստանում կան հնադարյան գանձեր, որ պատկանում են համայն մարդկությանը: Այստեղ մենք տեսանք ո՛չ միայն անցյալի մշակույթ, այլև ծաղկող սքանչելի արվեստ՝ իր երևելի գիտնականներով և ուրույն դպրոցով: Անշուշտ տաղանդավոր է հայ ժողովուրդը, որ մենք համոզվեցինք դրանում և մեր պարտքն ենք համարում դա լուսաբանել մեր գործունեության մեջ»:

Իր հերթին Մաուրիցիո Գաուդիին ավելացնում է.

– Ծանոթանալով հայ բազմադարյան մշակույթին և նրա ժամանակակից արվեստին՝ մենք տեսանք ճարտարապետական որոշակի դեմք և նույնքան ուրույն դպրոց ունեցող մի երկիր, որ արժանի է մեծ հարգանքի: Մենք ականատես եղանք ճարտարապետական դարավոր ավանդների և ժամանակակից չափանիշների գեղեցիկ համադրման, որ հատուկ է մեծ տաղանդ ունեցող ժողովրդի»:

\* \* \*

Ճարտարապետական այս կարևոր առաքելությունը վերջացավ օգոստոսի վերջին, և մեր հյուրերը նույն Fiat-ով պետք է վերադառնային Հոմ: Մենք զարմացած հարցնում էինք, թե ինչպես կարելի է այդ փոքր մեքենայով Հոմ հասնել, որի վրա իտալերեն և ռուսերեն խոշոր պաստառի վրա գրված էր.

– Հոմի համալսարանի՝ հայկական ճարտարապետությունը ուսումնասիրող խումբ:

Հյուրերի մեկնելու նախօրյակին Արվեստի ինստիտուտը գրեթե ողջ կազմով հրաժեշտի ճաշկերույթ էր տալու «Արարատ» ճաշարանում, որը նորովի ու շքեղ ձևավորել էր անվանի քանդակա-

գործ-խեցեգործ Հմայակ Բդեյանը: Նա հենց ինքը նախաձեռնել ու անձամբ ղեկավարում էր այդ երեկոն:

Ներկա էին Արվեստի ինստիտուտի տնօրեն Ռուբեն Զարյանը, անվանի ճարտարապետներ Ալեքսանդր Սահինյանը, Ստեփան Մնացականյանը, Միքայել Մազմանյանը, նրանցից կրտսեր Մուրադ Հասրաթյանը, որոնց սրտառույզ ճառերը Արմեն Զարյանը թարգմանում էր ջերմ մթնոլորտից արբեցած իտալացիներին: Անշուշտ, գինին նույնպես առատ էր, սեղանները՝ ճոխ, երաժշտությունը՝ ճաշակով, որի տակ բոլորս պարում էինք երանության մեջ:

Հանդեսին ներկա էր նաև Կոստան Զարյանը, որը նույնպես զվարթ տրամադրությամբ զրուցում էր իտալացիների հետ՝ մի առանձին շքեղություն տալով հանդեսին: Ես շատ կուզենայի մոտենալ նրան՝ ասելու, որ ծանոթ եմ իր գործերին, բայց չհամարձակվեցի:

Պիտի ասեմ, որ դա մի բացառիկ ու անմոռանալի երեկո էր անկեղծ, ջերմ մթնոլորտում:

Ու մեկ էլ հոգեպարար այդ գլխապտույտի մեջ անսպասելի ինձ է մոտենում մեծարգո Կոստան Զարյանը՝ ասելով.

*– Ինձի մատնեցին, որ դուք ֆրանսերեն գիտեք: Ես պետք ունիմ մեկի, որ ինձի օգնե»:*

Ես անասելի շփոթվում եմ, ի՞նչ ֆրանսերեն, ի՞նչ բան, հայերենս էլ եմ մոռանում, զգում եմ, որ երեսս այրվում է, բառերս կապ են ընկել: Թերևս իր գործերից կարդացած չլինեի, այլ կերպ կընդունեի այդ պահը: Ինչևէ, մի կերպ հավաքում եմ ինքս ինձ և կմկրմալով պատասխանում.

– Բայց ես աշխատում եմ, Վարպե՛տ (այդպես էին նրան դիմում Երևանում, ինչպես դիմում էին Իսահակյանին և Սարյանին), իսկ «մատարո»՝ Երվանդ Քոչարին:

Վարպետը հանգիստ ժպտում է՝ ասելով. «Ռուբեն Զարյանի

հետ արդեն կարգադրված է», -ապա զգալով շփոթմունքս՝ ավելացնում.

– *Վաղը տուն եկեք, կհոսենք:*

Հանդեսը թեև շարունակվում էր նույն ջերմությամբ, բայց ես այլևս մտահոգ էի ու շփոթված: Ինչպե՞ս չլինել, երբ ինձ օգնելու է դիմում Մեծն Կոստան Զարյանը, որ իր գործերով ակեկոծել էր իմ հոգին ու իմ անցյալը, դաստիարակությունն ու աշխարհայացքը: Դրանք այն գաղափարներն էին, որ ուշացած, բայց ոչ ուշ, հանդիպեցին ինձ ասելու, որ Հայրենիքը սիրելու և նրան փառաբանելու համար կան ուրիշ խոսքեր և ուրիշ կեցվածք, որ պատմությունը, մեր պատմությունը մեզ ներկայացրել են սխալ ու միակողմանի, և վերջապես մենք իզուր ժամանակ ենք վատնել շատ բաներ սովորելու, որոնք պետք չեն մեզ առհասարակ:

Երեկոն ավարտվեց Կոստան Զարյանի՝ հյուրերին ուղղված հրաժեշտի խոսքով՝ իտալերեն փայլուն ճառով, որ բոլորս լսում էինք հպարտությամբ ու ակնածանքով:

Հաջորդ օրը Արմեն Զարյանի գլխավորությամբ (իր Արա որդին նույնպես) ինստիտուտի գիտական քարտուղար Մարգարիտ Տեր-Սիմոնյանը, Մուրադ Հասրաթյանը և ես թանկագին հյուրերին ուղեկցեցինք մինչև Սևան, որտեղ հրաժեշտի նախաճաշ ունեցանք նրանց հետ, ապա բաժանվեցինք՝ բարի ճանապարհ մաղթելով նրանց:

## ԵՐԵՎԱՆ, ԱՐՈՎՅԱՆ 17

Իտալացի ճարտարապետները մեկնեցին, իսկ ես մնացի մտահոգ ու անորոշ՝ մտածելով ինձ սպասվող դժվար ու պարտավորեցնող գործի մասին. ինստիտուտի աշխատանքը, երեխաս... չասած, որ դիմացս կանգնած էր ոչ այլ ոք, քան ինքը՝ մեծարգո Կոստան Զարյանը:

Ի դեպ, այդ նույն ժամանակ Արվեստի ինստիտուտից նման աշխատանք էր հանձնարարված նաև Անելկա Գրիգորյանին՝ Վահրամ Փափագյանի հետ: Խելացի ու բանիմաց Անելկան հաճախ մեզ հետաքրքիր դրվագներ էր պատմում մեծ դերասանի մասին:

Սա ի միջի այլոց...

\* \* \*

Սեպտեմբերի երեքին, համաձայն պայմանավորվածության, գնացի Զարյանի Արովյան 17-ի բնակարանը: Դուռը բացեց ինքը՝ Վարպետը. տանն էին նաև որդին՝ Արմենը, և Լևոն Ներսիսյանը: Կարճ գրույցից հետո նրանք գնացին:

Խոսեցինք, նա հանգիստ ու անշտապ բացատրեց անելիքս, դիրեկտորիս համաձայնությունը, և որ օրվա առաջին կեսը զբաղվելու եմ ինստիտուտի աշխատանքով, իսկ երկրորդ կեսը՝ իր համար:

Աշխատասենյակում երկու գրասեղան կար, մեկը՝ ծանրաբեռնված «Հայրենիք» և սփյուռքահայ տարբեր հանդեսներով, որտեղ տարիներ ի վեր տպագրվել էին Զարյանի գործերը, մյուսը՝ գրամեքենայով պատրաստ, արդեն ինձ էր սպասում:

Այդ օրը՝ հրաժեշտից առաջ, երբ ասացի, որ կարդացել եմ

«Անցորդը», զարմանքով հարցրեց.

– *Ինչպե՞ս, որտե՞ղ...*

Պատասխանեցի, որ կարդացել եմ Հանրային գրադարանի «Հատուկ բաժնում», հատուկ թույլտվությամբ: Ժպտաց՝ մտածելով, թերևս, ճիշտ քարտուղար է ընտրել:

Հաջորդ օրը երբ գնացի, գրասեղանին արդեն շարված էին «Հայրենիքի»՝ 1935–36-ի համարները, որտեղից տողատակի ծանոթություններով պետք է մեքենագրեի «Սպանիան»: Վարպետն ասաց, որ Պետհրատի կողմից վեպը 1967-ի աշնանը հրատարակելու պայմանագիր է ստորագրված :

Բարեբախտաբար մեքենագրելու որոշ փորձառություն ունեի արդեն, քանի որ ուսանողական տարիներիս «Սովետական արվեստ» ամսագրի պատասխանատու քարտուղարը՝ Լևոն եղբայրս, ինձ համոզեց՝ որոշ ժամանակ փոխարինեմ իրենց բացակա մեքենագրուհուն: Անշուշտ, դա որոշ բարեբախտություն էր նաև ինձ համար՝ մոտիկից տեսնելու և լսելու հայ մեծերին՝ Ավետիք Իսահակյանին, Դերենիկ Դեմիրճյանին, Սուրեն Քոչարյանին, Վարդան Աճեմյանին և այլոց, որոնք այցելում էին խմբագրություն:

\* \* \*

Ինչպես ասացի, Զարյանի բնակարանը Աբովյան փողոցում էր, հինգհարկանի տուֆե շենքի երկրորդ մուտքի երրորդ հարկում, երեք խոշոր սենյակներով, լայն, մեծ պատշգամբով: Կահավորումը նույնպես բավարար էր, զգացվում էր ճարտարապետի ներկայություն, կնոջ բացակայություն:

Որդին՝ Արմենը, իր ընտանիքով՝ կինը՝ Ֆրաու Մարիան, չորս զավակները՝ Սիրվարդը, Անաիսը, Արան և Վալտերը, ապրում էին առաջին մուտքի 5-րդ հարկում, որը որոշ անհարմարություն էր ստեղծում ընտանիքի համար: Օրական մի քանի անգամ նրանք ստիպված էին իջնել-բարձրանալ՝ Ոոռո-ին որևէ բան փոխանցե-

լու: «Փոստատարները» հիմնականում երեխաներն էին: Նրանք բոլորը գեղեցիկ էին, շրջապատից տարբեր՝ իրենց հագուկապով:

Ջարյանների տան խոսակցական լեզուն առավելապես իտալերենն էր, ապա՝ հայերենը:

Արմենի կինը՝ ֆրաու Մարիան, գերմանուհի էր, ամուսինը՝ Նրա հետ երբեմն գերմաներեն էր խոսում:

Կուզենայի երկու խոսքով հիշել այդ ազնվաբարո կնոջը, արտաքինով տիպիկ գերմանուհի, վճիտ բաց դեմքով, զուսպ և կիրթ, ծայրաստիճան աշխատասեր ու մաքրասեր, ինչպես բոլոր գերմանացիները: Նրա վրա ոչ միայն իր մեծ ընտանիքի հոգսն էր, այլև սկեսրայրի կենցաղային առօրյան՝ մեծագույն հոգածությամբ: Այդ բոլորից զատ, ֆրաու Մարիան ընդգծված անհատականություն էր, խելացի և բանիմաց կին: Այդ տարիներին նա գերմաներեն էր դասավանդում Երևանի համալսարանում, մեծապես հարգված իր ուսանողներից: Մարիան, գոնե արտաքին տպավորությամբ, ոչ միայն համակերպվել էր Հայաստանում ժամանակին տիրող սոցիալ-տնտեսական դժվարություններին, այլև կարծեք ինչ-որ ձևով դա նորմալ էր համարում: Հունվարյան ցուրտ օր էր, շենքի մուտքի առջև հանդիպեցի Մարիային, սովորական կարճ խոսակցությունից հետո, երբ պատրաստվում էի հրաժեշտ տալ, նա ժպտալով ասաց.

– *Գիտե՞ք, ժամը 5-ին կոռպերատիվը սոխ է ստանալու, դուք չէի՞ք ուզենա...*

Ես որոշ շփոթմունքով նայեցի այդ ազնիվ կնոջ դեմքին, ամաչեցի, չգիտեմ ում փոխարեն, ասելով, որ ես նույնպես կուզենայի, բայց ժամը 5<sup>30</sup>-ին մանկապարտեզ պետք է վազեմ՝ երեխայիս վերցնելու: Իսկ սոխը կոռպերատիվը (որ իրենց շենքի առաջին հարկում էր) վաճառում էր կիլոգրամը 20 կոպեկով, մինչդեռ շուկան՝ 2 ռուբլով, սակայն սոխ կամ նման այլ բարիք ունենալու հա-

մար պետք էր 2–3 ժամ հերթ կանգնել հրմշտոցի մեջ՝ վստահ չլինելով՝ այդ բարիքը քեզ կհասնի՞, թե՞ ոչ...

Ֆրաու Մարիան ստոիկյան քաջությամբ համակերպվել էր այդ ամենին ի սեր իր ամուսնու և ընտանիքի:

Սակայն այդ տարիներին, կարելի է ասել, նյութականը դարձել էր երկրորդական, քանի որ մայրաքաղաքը եռում էր հոգևոր բարձր կյանքով՝ նկարչի տան ցուցահանդեսները, թատրոնների բեմադրությունները, ֆիլհարմոնիայի համերգները... Հիշենք թեկուզ Օհան Դուրյանի, Հովհաննես Չեքիջյանի, Կոմիտասի քառյակի, Ժան Տեր-Մերգերյանի, Գոհար Գասպարյանի անմոռաց ելույթները: Այդ դահլիճներից մարդիկ հեռանում էին, առանց չափազանցության, ինքնամոռաց բերկրանքով՝ մոռացած առօրյա հոգսերն ու դժվարությունները:

Կոստան Զարյանը, որ տեսել ու լսել էր աշխարհահռչակ բազում արվեստագետների, անչափ հպարտ էր ու խանդավառ այդ ամենով: Ուշագրավ էր, որ կարծիք հայտնելով որևէ արտիստական երևույթի մասին՝ նա խոսում էր լիարժեք սեփականատիրոջ զգացողությամբ:



*«Սպանիայի պատմությունը՝ ներկան  
եւ անցյալը՝ թուրով եւ կրակով է  
շաղված, ինչպես մեր պատմությունը»*

**Կոստան Զարյան**

## **«ՍՊԱՆԻԱ»**

Կոստան Զարյանը Իսպանիա է մեկնել 1934-ին իսպանացի անվանի գրող, փիլիսոփա, ազգային գործիչ Միգել դը Ունամունոյի (1864–1936) հրավերով, որի հետ նամակագրական կապ է ունեցել նախօրոք:

Իսպանիայի գրավիչ ու հոգեհարազատ պատմությամբ ներշնչված՝ շատ չանցած հեղինակը ստեղծեց իր հանճարեղ «Սպանիա» վեպը: Ինչպես ասացի, իմ առաջնահերթ գործը պետք է լիներ «Հայրենիք» ամսագրի էջերից առաջիկա հրատարակության համար մեքենագրել «Սպանիան»: Վարպետի երկլեզու փափուկ գրամեքենան ինձ դուր եկավ, որ հայերեն-լատիներեն տառատեսակը լծակի շրջադարձով կարելի է փոխել:

\* \* \*

«Սպանիան» առաջանում էր, գլուխները՝ մեկը մյուսից հետաքրքիր ու ցնցող՝ «Բարսելոնա», «Երեկո», «Պարալլելո», «Տոսա դե Մար», «Սարդանա»... և ինչպես հեղինակն է գրում՝ «*Այս գիրքը լույս ճամփորդական տպավորությունների գիրք չէ*», որի էջերը մեկընդմեջ անդրադարձ էր Իսպանիայի և Հայաստանի պատմության և մշակույթի՝ Զարյանի իմաստաբանական մեկնություններով:

Պիտի ասեմ նաև, որ այդ մեքենագրությունը սովորական գործ չէր ինձ համար: Շարադրանքով տարված՝ երբեմն ընդհա-

տում էի գործս՝ ավարտված էջը նորից կարդալու: Վարպետը, եթե տանն էր լինում (նա աշխատում էր Գրականության և արվեստի թանգարանում), հարցնում էր.

– Ի՞նչ կա...

Պատասխանի փոխարեն ես բարձրաձայն կարդում էի էջը, որ նա լսում էր համակ ուշադրությամբ: Ահավասիկ մի էջ, որ տետրիս մեջ արտագրել եմ իր թույլտվությամբ.

*«Հայր իր հայրենիքից դուրս դադարում է հայ լինելուց, որովհետև նա գերազանցապես ազգ է, իր բնության և երկրի հետ կապված հավաքական միավոր: Օտար միջավայրում նա իր ազգային դիմագիծը պահում է այնքան ժամանակ, ինչքան ժամանակ որ հիշում է իր հայրենի գյուղը, իր տան մոտից անցնող վտակը, իր բակի մեծ ընկուզենին: Ինչքան ժամանակ որ նա իրեն զգում է ժամանակավոր գաղթական, վտարանդի, ինչքան ժամանակ որ նրա պայուսակները պատրաստ են՝ ամեն վայրկյան տուն վերադառնալու համար իր միակ երազը: Բայց այն օրը, երբ նա որոշում է մնալ, երբ նաև սկսում է ասել «մեր Ֆրեզնոն», «մեր Բուա Կոլումբը» կամ «մեր Սալոնիկը», նա այլևս հայության գծից դուրս է:*

*Նկատի ունեցեք, որ այդպես են նաև շատ ուրիշ ժողովուրդներ՝ իտալացիները, գերմանացիները, ռուսները...*

– Հրեան չէ, նա մնում է ամեն տեղ:

– Այդ պատճառով էլ նա ազգ չէ: Հրեան որոշ տիեզերագագաման առանձին մարդկային տիպար է. այդ առանձնահատկությունը, եթե ուզում եք, իր առավելությունն է, բայց նաև իր ողբերգությունը»:

«Սպանիա», «Տոսա դե Մարե»:

Վարպետին մի օր հարցրի, թե ինչու հատկապես «Սպանիան» որոշեցին հրատարակել: Պատասխանեց.

– *Կենսոլոմից զանգահարեցին մի օր, ասացին, որ Զարոբյա-*

նր (Կենսոկումի առաջին քարտուղարը 1960–1966-ին – Ս.Ա.) ուզում է ինձ տեսնել: Գնացի, վեր քարձրացա, իր սենյակը հասա: Դռնից հագիվ ներս մտա՝ Զարոբյանը վեր կացավ տեղից, մոտեցավ ինձ, փաթաթվեց և տարավ նստեցրեց ոչ թե դիմացը, այլ ինքը նստեց կողքիս:

Խոսեցինք, կարծես վաղուց ի վեր ինձ կը ճանչնար: Ասաց, որ գործերս վեց հատորով պիտի հրատարակվի: Պետհրատը շուտով «կոնտրա» ստորագրեց 6 հատորի համար: Շատ չանցած՝ Զարոբյանին ազատեցին պաշտոնից, և «կոնտրան» կորավ...

Այս ասելով՝ լռեց և անորոշ ու մեկուսի շարունակեց.

*Ի՞նչ եղավ այդ «կոնտրան»...*

Ես ապշած լսում էի՝ մտածելով, որ «Սպանիան» հրատարակության է առաջարկվել իբրև մեղմացուցիչ դեպք հանցանաց:

Միամտորեն մտածելով, որ գրաքննությունը բանաստեղծություններին թերևս պակաս խստությամբ կմոտենա, հարցրի մի անգամ, թե ինչու «Օրերի պսակը» (Պոլիս, 1922) չի առաջարկում վերահրատարակել: Պատասխանեց.

*– Անկեղծ ասած քանաստեղծություններս կ'իսանդեմ...*

\* \* \*

Սենյակում, որտեղ ես էի աշխատում, Վարպետը սովորություն ուներ մտազբաղ քայլելով, հայացքը սևեռած հեռուն, անցյալից որևէ դեպք հիշել: Երբ հարցրի, թե գրամեքենայի չխկչխկոցը չի՞ խանգարում, պատասխանեց.

*– Ընդհակառակը, կմտածեմ...*

Այդ հիշողությունները, սակայն, Նա ոչ թե ինձ էր պատմում, այլ վերհիշելով անցյալը՝ խոսում էր ինքն իր հետ, ինչպես.

*– Տանը խոսում էինք ռուսերեն, իսկ ծառաների հետ՝ հայերեն, Շամախու քարքառով:*

Մեկ ուրիշ անգամ հիշելով ծնողներին՝ ասաց.

*Մայրս ազնվաբարո նստած իր բազմոցին... Նա ինձ Կոստյա էր կանչում:*

Մեկ ուրիշ անգամ հիշելով հորը.

*– Հայրս ցարական բանակի գեներալ էր, նա ուներ Գեորգիայի խաչի երեք աստիճան... Այս նախադասությունն ասաց ոուսերեն, որ անշուշտ տարբեր էր մեր իմացած ոուսերենից. դա ժամանակի ազնվական դասի ոուսերենն էր, որով Ջարյանը խոսում էր առիթ եղած դեպքերում՝ զարմանք պատճառելով զրուցակցին:*

\* \* \*

Ինչպես ասացի, «Սպանիայի» մեքենագրությունը սովորական գործ չէր ինձ համար: Ողջ էությամբ կլանված ապրում էի գրքի բովանդակությամբ՝ գիշերները մտածելով այդ մասին: Գրառումներիս մի էջ ևս, որ տետրիս մեջ արտագրել եմ, հավանաբար շոյված իմ Լոռվա արմատներից.

*– Վաղուց է՝ մտել ենք Արագոնյան երկիրը, ուր արևը ավելի առատ է, ուր հողը ավելի մերկ և ավելի չոր է, ուր մարդիկ ավելի դանդաղ են և ավելի մտածկոտ:*

Ինձ համար ինչ-որ հայրենի, ինչ-որ շատ մոտ սրտիս մի աշխարհ է բացվում: Կարծես անցել ենք Վրաստանի սահմանները, որ ի միջի այլոց այնքա՛ն նման է Կատալոնիային, առանց այս վերջինի նուրբ քաղաքականության, և մտել ենք Հայաստան:

*Տարագիր բա՛խտ...*

Այստեղ ապրում են իսկական գյուղացիներ, որ Կատալոնիայում չես տեսնում: Ու քիչ էր մնում, որ ասեի՝ այստեղ ապրում են մե՛ր գյուղացիները: Նույն բրդի և ոչխարի հոտը, նույն պարզ, մտածկոտ և ազնվական շարժումները, նույն տոկոնությունը և նույն համակերպությունը:

Հիշում եմ, Լոռվա մոտերից անցնելու ժամանակ, մինչ գնացքը կանգ էր առել մի խղճուկ կայարանի առջև, մոտակա բլրան փե-

շից վար արագ-արագ իջնում էր մի շատ երիտասարդ գյուղացի, տերևներով ծածկված երկու ափերի մեջ նոր քաղած թուրք բերելով, որպեսզի մեզ ծախե: Ի՞նչ ճկուն և գեղեցիկ մարմին ուներ նա, կապույտ, երիտասարդ կենդանու փայլուն աչքեր և գլուխը վեր բռնելու ի՞նչ ազնվական ձեռք: Ու վաղ առավոտ էր և զով: Գյուղացուց ցողով ծածկված թարմ խոտի հոտ էր գալիս, եւ թուրքը համով էր, ինչպես նա համով է միայն Լոռվա գավառում...

Եվ ապա հեղինակը շարունակում է.

... Այդպես լեռան փեշից վար վազող գյուղացու այդ վերակոչումը **մտքիս մեջ վերքի նման բաց է անում արևաշաղ հայրենիքի հեռավոր և երաժշտական աշխարհը** (ընդգծումը մերն է-Ա. Ս.): Ամեն ինչ ապրում է նրանով և նրա հետ: Ամեն ինչ ընկնում է նրա առատ, կենդանի և գերիշխող լույսի տակ: Ու զարմանալի չէ՞ այդ... Այս երկրագնդի վրա բոլոր ապրած երկրներից Հայաստանն այն աշխարհն է, ուր ամենից քիչ եմ կանգ առել: Ուր չեմ իսկ ծնվել, և ուր մարդիկ նայում են ինձ (խոսքը 1922-24 թթ. մասին է – Ա.Ա.) և երևի շարունակում են դեռ նայել օտարի աչքերով: Եվ, սակայն, ինչպե՞ս ասեմ այդ, ես նրան գիտեի նրան տեսնելուց առաջ եւ երբ տեսա, նա վաղուց սպասող սիրուի ու նման բաց արեց ինձ այնպիսի գաղտնիքներ, որոնց մասին գաղափար չունեին և չունեն տարիներով նրա շուրջը ապրողները և նրա մարմնի գովքը հյուսողները:

«Սպանիա» - «Ճամփաներ»

\* \* \*

«Սպանիան» առաջանում էր: Մեքենագրել էի գրեթե մեկ երրորդ մասը: Հերթական գլուխը կոչվում էր «Ցուլամարտ»: Չգիտեմ՝ խելքիս ինչ փչեց, դարձա Վարպետին և հարցրի. չէի՞ք ուզենա՞ ոչ թե ցուլամարտ, այլ ցլամարտ գրվի: Նա առանց տատանվելու «այո» ասաց, և մեքենագրեցի «Ցլամարտ»: Ո՛չ էի արել...

Մեքենագրված էջերը Լևոն Ներսիսյանը սովորաբար կարդում էր վերջնական ու մի կողմ դնում: Հաջորդ օրը երբ տեղ հասա, նա արդեն այնտեղ էր ու կարդացել էր նախորդ օրվա մեքենագրությունը: Հազիվ էի ներս մտել, երբ նա «հարձակվեց» վրաս բարկացած, համարյա գոռալով.

– *Դու ինչպե՛ս ես համարձակվում փոխել Կոստան Զարյանի լեզուն,- ապա՝ ավելի հանդարտ.*

– *Սիրելի՛ս, իմացի՛ր, որ նրա լեզուն պետք է ուսումնասիրվի, ինչպես Շեքսպիրի լեզուն է ուսումնասիրվում...*

Երբեք դասախոսիս չէի տեսել այդպես բորբոքված ու անաչառ: Պատասխանեցի, որ արել եմ իր համաձայնությամբ:

– *Նրան հե՛շտ է համոզել,- ասաց,- անմիջապես փոխի՛ր և նորից մեքենագրի՛ր:*

Հուզվեցի, գնացի տեղս նստեցի, բայց չէի կարողանում աշխատել, արցունքներս գլորվում էին: Սեղանից վերցրի «Օրերի պսակը» և սկսեցի թերթել: Լևոնը զգաց, որ շատ խիստ էր, մոտեցավ աթոռիս, գլուխս գրկեց և մազերս համբուրեց՝ ասելով.

– *Կներես խիստ խոսելուս համար:*

Հաշտվեցինք, և ես մոռացա միջադեպը: Նա իրավացի էր:

\* \* \*

Զարյանը գրեթե ամեն օր նոր բանաստեղծություն էր գրում. իր ընտրությամբ մեքենագրում էի որոշ մի քանիսը և հանձնում «Գրական թերթին»: Խմբագրության աշխատակիցները շատ սովորական ընդունում էին դրանք, իսկ ես դուրս էի գալիս մտահոգ ու անհանգիստ, քանի որ ներկայացված ոչ բոլոր գործերն էին հրապարակվում:

## «ՆԱՎԸ» ՌՌԻՍԵՐԵՆ

Որոշված էր Մոսկվայում հրատարակել Կոստան Զարյանի «Նավը լերան վրա» ծավալուն վեպը:

Ներսիսյանի հետ խոսում էին թարգմանության մասին՝ հանձին Երևանի «Կոմունիստ», Մոսկվայի «Литературная газета» հանդեսների թղթակից, արձակագիր-թարգմանիչ Կոստանդին Սերբրյակովի (1914–1996): Ես համարձակություն ունեցա խոսելու Աշոտ Սահրադյանի մասին (1935–2015)՝ ասելով, որ նա թարգմանել է արդեն Նարեկացու, Քուչակի, Զոհրապի, Թորոլենցի, Չարենցի, Վարդգես Պետրոսյանի և ուրիշ հեղինակների գործերից:

Իր հերթին Աշոտից հաճախ էի լսել իրեն հատուկ ոգեշունչ խոսքեր Զարյանի մասին:

Հոկտեմբերն էր. Աշոտը եկել էր Արվեստի ինստիտուտ. առաջարկեցի միասին այցելել Զարյանին, որ սիրով ընդունեց: Գնացինք. Վարպետին ներկայացրի Աշոտին, ապա մենակ թողնելով նրանց, անցա իմ գործին: Աշոտը՝ անմիջական, պոռթկուն, խոսեցին, խոսեցին, սկսեցին հայերեն, հետո անցան ռուսերենի: Նա ոգևորված, իհարկե չափազանցված, ինչ-որ դեպքեր էր պատմում Վարպետին գրողների միջավայրից, որին հաջորդում էր նրանց բարձրաձայն ծիծաղը:

Ի դեպ, Աշոտի հայրը՝ գնդապետ Արիստակես Սահրադյանը, Սպայի տանը հաճախ ռազմահայրենասիրական ելույթներ էր ունենում, որոնցից մեկի ժամանակ նա լուրջ և մասնագիտորեն բացատրեց, թե հայերիս որքան զորք ու զինամթերք է հարկավոր՝ գրավելու Ղարսի նահանգը:

Սա ի միջի այլոց, իհարկե:

\* \* \*

Ինչպես սպասում էի, Վարպետի և Աշոտի միջև սկսվեց ջերմ բարեկամություն: Տարիներ անց այդ առաջին հանդիպմանը Աշոտը անդրադարձել է հետաքրքիր հոդվածով «Коротких встреч приятные минуты» («Գործարար», Երևան, 2010, հուլիս-սեպտեմբեր):

1969-ին Մոսկվայում Սահրադյանի թարգմանությամբ լույս տեսավ «Корабль на горе» (Москва, «Советский писатель»), վերահրատարակվեց 1974-ին (Москва, «Дружба народов»):

Մոսկովյան հրատարակության ընդարձակ վերջաբանը («Գրողը և իր վեպը») ըստ արժանվույն գնահատմամբ գրեց Լևոն Հախվերդյանը:

Ափսոս, որ երկու հրատարակությունները թարգմանվեցին երևանյան տարբերակով՝ Հրաչյա Գրիգորյանի սովետամետ խմբագրությամբ:

Հարց. ինչո՞ւ Հրաչյա Գրիգորյան, երբ ունեինք ճանաչված գրականագետներ՝ Էդվարդ Ջրբաշյան, Հրանտ Թամրազյան, Սուրեն Աղաբաբյան, Լևոն Հախվերդյան, որոնք սիրով կստանձնեին խմբագրել այդ «ոգու պատմություն» վեպը:

Աշոտ Սահրադյանի և Կոստան Զարյանի ջերմ բարեկամությունը շարունակվեց մինչև նրա կյանքի վերջալույսը:

\* \* \*

Աշխատասենյակի մեծ գրասեղանին էր նաև «Նավի»՝ 1943-ի բոստոնյան հրատարակությունը: Խնդրեցի Վարպետին տուն տանել կարդալու, որը շատ արագ կարդացի և վերադարձրի շնորհակալությամբ:

Աստիճանաբար առավել ակնհայտ էի զգում Զարյանի հանդեպ վերևից եկող անտարբերությունը, թեև Նա մեծապես գնա-



հատված ու հարգված էր մտավորականության կողմից, ինչպես Մարտիրոս Սարյանը, Մինասը, Գևորգ Էմինը, Սիլվա Կապուտիկյանը, Ռուբեն Զարյանը, Ստեփան Ալաջաջյանը, Սարգիս Մելիքսեթյանը, Գուրգեն Բորյանը և ուրիշներ: Այցելությունները, իհարկե, շատ չէին, դրանցից հիշելով մեկը՝ ասաց.

– *Մայիսի 1-ին ինձի այցելության եկան Մարտիրոս Սարյանը, Սերո Խանգաղյանը, Սիլվա Կապուտիկյանը, Հրաչյա Հովհաննիսյանը, գինի և շամպայն բերեցին...*

Գրողների 5-րդ համագումարի առթիվ «Գրական թերթի» հոկտեմբերի 10-ի համարում հրապարակված էր Զարյանի խոսքը՝ «Լինել ավելի համարձակ» վերնագրով: Թերթը գնեցի և տարա իրեն:

\* \* \*

Նոյեմբերն էր, շտապ ինչ-որ գործ կար երկուշաբթի հասցնելու, ուստի աշխատելու էի շաբաթ օրը: Զանգահարեցի Վարպետին՝ ասելու, որ ստիպված եմ երեխայիս հետս բերելու, ասաց՝ «հոգ չէ, թող գա»:

Աղջիկս այդ ժամանակ հինգ տարեկան էր, բայց շատ աչքաբաց ու բանիմաց իր տարիքի համար, որ ես առանձնապես չէի քաջալերում: Նրան նախազգուշացրի, որ հանգիստ պետք է մնա, հարցեր չտա Վարպետին և խելոք մնա: Նրա համար թուղթ ու մատիտներ էի վերցրել՝ զբաղվելու համար: Տեղ հասանք, նա՝ իբրև «լուրջ և դաստիարակված» երեխա, հարգանքով բարևեց Վարպետին, նստեց փոքր սեղանի առջև ու սկսեց նկարել: Ես իսկույն գործի անցա:

Հազիվ մի քանի րոպե անց լսում եմ աշխույժ զրույց և բարձրաձայն ծիծաղ:

Վերջացրի գործս՝ ներողություն խնդրելով Վարպետից, իսկ նա, թե.

– Շատ խելացի է այս երեխան, կա՛մի լավ դպրոց, որ հաճախի:

Ես «այո» ասացի ու հանգիստ շունչ քաշեցի: «Երեխան» քաղաքավարի հրաժեշտ տվեց Վարպետին, և դուրս եկանք: Փողոցում, ընդհակառակը, նա լուռ էր և կենտրոնացած: Հանկարծ կանգնեց, հուզված ու բարձրաձայն ասաց.

– Մամա՛, իսկ ես գիտեմ, թե ով է այդ պապիկը:

– Ո՛վ է, Հասի՛կ ջան,- հարցրի:

Իսկ նա, թե.

– Դա էն պապիկն է, որ դու ինձ պատմել ես, հիշո՞ւմ ես, ծերունին և ծովի պապիկը:

– Բայց ինչպե՛ս իմացար,- հարցրի:

– Ես գիտեմ, որովհետև նա գրքեր էր գրում և մենակ էր: Այս պապիկն էլ գրքեր է գրել և մենակ է:

Դա հինգ տարեկան երեխայի անմիջական տպավորությունն էր: Այդ գիրքը (Հեմինգուեյի «Ծերունին և ծովը») կարդալու ժամանակ նրան յուրովի պատմել էի բովանդակությունը՝ ազատվելու մշտական հարցից՝ «ինչի՞ մասին է այդ գիրքը»...

\* \* \*

Գնալով առավել ակնհայտ էի զգում Զարյանի շուրջը վերից եկող լուռ անտարբերությունը, որը Նա տանում էր արժանապատիվ լռությամբ:

Տանը հարազատներիս հետ հաճախ էի խոսում Զարյանի մասին: Մորաքրոջս որդին՝ ճանաչված մտավորական Լևոն Հախվերդյանը, անկախ ինձնից իհարկե, հետաքրքրված էր Զարյանով, սակայն նրա ժամանակը խիստ ծանրաբեռնված էր (թատրոն, Արվեստի ինստիտուտ, Թումանյան, Իսահակյան, հազար ու մի գիտաժողով), ինչպես ասում են, շնչելու ժամանակ չունեի:

Նոյեմբերն էր. Հախվերդյանը ցանկություն հայտնեց այցելե-

լու Վարպետին: Ես անմիջապես ժամադրություն խնդրեցի ու մի շաբաթ երեկո միասին գնացինք: Շատ կուզենայի լսել նրանց զրույցը, բայց հարմար գտա նրանց մենակ թողնել: Զրույցեցին բավական երկար ու հանգիստ: Ուշ երեկո էր, երբ դուրս եկանք, Լևոնը մտազբաղ էր: Խորապես տպավորված հանդիպումից՝ ասաց.

– *Պետք է ժամանակ գտնել այս մարդու ստեղծագործության մեր լուրջ զբաղվելու:*

Հախվերդյանի ծավալուն հոդվածը լույս տեսավ «Հայրենիքի ձայն»-ում (19 փետրվար, 1967) լրագրի մի ամբողջ էջով, որ սկսվում էր հետևյալ տողերով.

– *Որքան էլ ազգակից՝ իմաստով շատ են տարբեր երկյուղածություն և երկյուղ բառերը: Երբ զրույցի ես նստում Կոստան Զարյանի հետ, դրանք իմաստով էլ մոտենում են, գրեթե նույնանում, որովհետև եթե արտիստական այդ շքեղ կերպարանքը, այդ վեհատեսիլ ծերունազարդ մարդն իր ամբարած իմացությամբ և մոքի անկախ թռիչքով հարուցում է պատկառանք ու երկյուղածություն, ապա մեզ համար սրբություն ու հեռավոր առասպել դարձած մեծերի հետ ունեցած շփումների անճիգ մտաբերումները այնքան շատ են ու ազդու, որ հարուցում են մի զգացում, որ հեռու չէ երկյուղից...*

Եվ ապա.

– *Աշխարհը ոտի տակ տված, այդքան երկրներ ու աստվածներ, ավելի մեծ երկրներ ու ավելի հզոր աստվածներ տեսած մարդը վաղուց ի վեր փարել է մի երկրի ու մի Աստծու, որ միանում են Հայաստան անվան մեջ: Այդքան լեզուներ, ավելի հզոր լեզուներ ջրի պես իմացող մարդը փարել է մի լեզվի, որ հայերենն է: Այնքան հզոր մշակույթներ տեսած ու յուրացրած մարդը փարել է մի մշակույթի՝ հայկականին: Ո՛չ մի օտար աստված, որքան էլ հզոր ու առինքնող, չի բռնադատել ու ճնշել այդ ազատ ոգին ու անկախ միտքը...*

*Ողիսեսի առասպելն ու նրա առասպելական հայրենաբաղ-*

*ձությունը շարունակում են հարատևել: Եվ ինչո՞ւ Կոստան Զարյանի կյանքը մի ողբասկան չէ: Նրա հայրենաբաղձության հիմքը հարազատության անդիմադրելի զգացումը չէ միայն, այլ խորունկ հատվածը հայրենի մշակույթի հզորության հանդեպ»:*

Հոգվածը լայն արձագանք ունեցավ գրասեր հասարակության կողմից, Վարպետը նույնպես գոհ էր: Իսկ Կենտկոմը չհապաղեց իր դժգոհությունը հայտնել Լևոնին Աշոտ Հովհաննիսյանի հեռախոսաձայնով:

Ափսոս, որ Հախվերդյանի բեղուն գրիչը, որ մնայուն-արժեքավոր ուսումնասիրություններ է թողել ոչ միայն հայ թատրոնի պատմության, այլև Թումանյանի, Իսահակյանի, Սուրեն Քոչարյանի, Պարույր Սևակի մասին, կարժևորվեր նաև Կոստան Զարյանով:

\* \* \*

Դեկտեմբերն էր, ինձ նվիրեց «Տատրագոմի հարսը» (Երևան, 1965)՝ հետևյալ մակագրությամբ. «Սիրելի Սեդային իր ժպտուն աջակցության համար. Կոստան Զարյան, Երևան, 11.12.66»:

Հիշեցնեմ, որ այս հատորի մեջ, բացի «Տատրագոմի հարսը» պոեմից, տպագրված էին նաև «Արա Աստված» և «Վահագն» դյուցազներգությունները՝ Վահագն Դավթյանի շատ հակիրճ ու զուսպ նախաբանով:

Գիրքը, որ կարդացել էի արդեն, բացեցի «Արա Աստված» դյուցազներգության առաջին էջը և համարձակություն ունեցա բարձրաձայն կարդալու նախերգանքը.

*Մայր Անահիտը, երկու ձեռքերով սեղմեց իր մարմնին  
Նշենու ծառի ճյուղը սրբազան,  
Եվ ծնավ Արան:*

Արան՝ արեւի հրաթափ լույսերի  
Հրեղեն թիավար...  
Արան՝ աստղերի հօտը պահպանող սրնգահար Հովիվ,  
Արշալույսների նռան գինիով հարքած տեսանող-  
Արան՝ թեւավոր ցուլի եղջիրներ հագած խօլ ոգի-  
Արան՝ գարունը ոսկե շողերով պեղող եւ հերկող  
բիրեղէ արօր-  
Արան՝ բողբոջի անը պաշտպանող ցողաթուրմ վահան-  
Կահարդանք ցանող բոյրասփիռ ռեհան-  
Արան՝ վառ Ոգի եւ աստվածություն:

Մայր Անահիտը, երկու ձեռքերով սեղմեց իր մարմնին  
Նշենու ծառի ճյուղը սրբազան,  
Եվ ծնավ Արան:  
Ողջունենք նրան, ողջունենք նրան:

Ուրիշ մի օր, ի զարմանս ինձ, խնդրեց, որ նորից այդ հատ-  
վածը կարդամ: Ես ոչ թե կարդացի, այլ արտասանեցի բերանացի:  
Երբ վերջացրի, ասաց.

– Երբ լույս տեսավ «Տատրագոմի հարսը» (1930, Բոստոն),  
Մխիթարյանները ասացին. «Մարդը հայերեն չգիտեր...»:

## ԾԱՂԿԱԶՈՐ

Մոտենում էին 1967-ի Ամանորի արձակուրդները: Հախվերդյանները որոշել էին ընտանիքով Ծաղկաձորի գրողների հանգստյան տանն անցկացնել այդ օրերը: Լևոնի կինը՝ Սոնան, ինձ համոզում էր իրենց միանալ, քանի որ այնտեղ դեռ մի ազատ սենյակ էր մնացել: Ես առարկեցի՝ ասելով, որ ինստիտուտին կարող եմ խնդրել, բայց Վարպետին՝ ո՛չ: Նա թե՛ «փորձի՛ր, գուցե համաձայն կլինի 10 օրով ընդհատել գործը»:

Հաջորդ օրը հազիվ էի սկսել բացատրությունս, երբ Վարպետը անսպասելի ասաց.

– *Ես նույնպես կուզենայի Ծաղկաձոր գալ:*

Անմիջապես Գրողների միություն գնացի՝ գրական ֆոնդի նախագահ Ժորա Հարությունյանին հայտնելու, որ Զարյանը ցանկություն է հայտնել Ծաղկաձոր գնալու, հետևաբար՝ ես չեի կարող գնալ, քանի որ ազատ սենյակ այլևս չկար:

Հարությունյանը մի քանի վայրկյան մտածեց ու ասաց.

– *Դու նույնպես կզնաս, առաջին հարկի մեծ խաղասենյակը կհարմարեցնենք քեզ ու երեխայիդ, և հարցը կլուծվի»:*

Այստեղ նույնպես հիշեցնեմ, որ այդ տարիներին Ծաղկաձորի գրողների հանգստյան տունը փայտաշեն, երկհարկանի գողտրիկ շինություն էր՝ իր սակավաթիվ սենյակներով:

Մեկնելու էինք դեկտեմբերի 22-ին: Վարպետը շուտ պատրաստել էր իր ճամպրուկը՝ չմոռանալով «ձյունի կոշիկները»: Ես խնդրեցի վերցնել նաև «Նավի»՝ Բոստոնի հրատարակությունը: Ինքը, թե՛ «*ի՛նչ կարիք կա, դու կարդացիր արդեն*»: Ես պնդեցի, և ինքս ճամպրուկի մեջ դրեցի գիրքը:

Հաջորդ օրը բոլորս միասին Գրողների միության ավտոբու-

սով ուրախ տրամադրությամբ մեկնեցինք Ծաղկաձոր:

Տեղ հասանք, վերևի հարկում, ինչպես նախատեսված էր, Վարպետից բացի տեղավորվեցին մյուս գրողները՝ իրենց ընտանիքներով՝ Համո Սահյանը, Գևորգ Էմինը, Սաղաթել Հարությունյանը, Լևոն Հախվերդյանը: Ես՝ թշվառականս՝ երեխայիս հետ առաջին հարկի ոչ այնքան հարմար, հսկայական սենյակի, ավելի ճիշտ ցուրտ դահլիճի մի անկյունում: Սակայն դա այնքան էլ կարևոր չէր ընդհանուր ուրախ, տոնական մթնոլորտի մեջ:

Իսկ «Նավը» խնդրել էի վերցնել որոշակի մտադրությամբ: Երևանյան հրատարակությունն իր տխուր պատմությամբ ծանոթ էր բոլորին: Ծաղկաձորում գրողները ազատ ժամանակ ունեին և կարող էին ծանոթանալ Բոստոնի տարբերակին, մտքեր փոխանակել:

(Երևանյան «Նավը» Լևոնին էր նվիրել հետևյալ մակագրությամբ. «Տեր և Տիկին Լևոն Հախվերդյանին: Կոստան Զարյան», Երևան, 1966): Նրանք երկուսն էլ կարդացել էին գիրքը:

Առաջին իսկ օրը Բոստոնի հրատարակությունը վերցրի Վարպետից և տվեցի Սոնային: Նա թարգմանչուհի էր, բացառիկ ընդունակ, խելացի, մարդամոտ ու անմիջական բնավորությամբ:

Սոնան շատ արագ կարդաց և ոգևորված փոխանցեց հաջորդ ընթերցողին...

Մի քանի օր անց բոլորը միայն Զարյանի մասին էին խոսում:

Ես լուռ հետևում էի հաջողությանը:

Ճաշարանում յուրաքանչյուր ընտանիք առանձին սեղան էր զբաղեցնում: Ես կուզենայի, որ Վարպետը նստեր որևէ գրողի սեղանին, առօրյա զրույցի, որ առիթ կլիներ նաև որոշ մերձեցման: Սեղաններն էլ հակառակի պես բավական հեռու էին իրարից, ուստի այնպես ստացվեց, որ ես և Հասմիկը մնացինք Վարպետի միակ սեղանակիցն ու զրուցակիցը:

Հակառակ դրան, պատահեց այլ բան: Մի առավոտ պարզվեց, որ գիշերը, երբ կանայք ու երեխաները Մորփեոսի գրկում են, տղամարդիկ հավաքվել են նույն ճաշարանում ու մինչև ուշ գիշեր պոկեր են խաղացել, որին Վարպետը ոչ միայն մասնակից է եղել, այլև բոլորին «կրել է», այսինքն՝ հաղթել է: Առավոտյան ոգևորված պատմում էր Սաղաթելը: Սա՝ մեկ, երկրորդը՝ նույն խումբը հաջորդ գիշերը բիլիարդ է խաղացել, որտեղ միակ հաղթողը նորից Վարպետն է եղել: Եվ այսպես, չորս կողմից լսում ենք զարմանք ու հիացում 80-ն անց Վարպետի հասցեին: Իսկ պոկերն ու բիլիարդը կրկնվում էին: Իհարկե, բոլոր միջոցառումների կազմակերպիչն ու կենտրոնական դեմքը Սաղաթել Հարությունյանն էր:

Մի օր Վարպետը ժպիտով ասաց.

*Ամեն մարդ Սաղաթելը կսիրե...*

\* \* \*

Ծաղկաճորը, ինչպես միշտ, սքանչելի էր իր բարձրագագաթ ձյունառատ սարերով, արևի տակ պսպղացող եղևնիներով: Այդ սարերի գագաթներին Լևոնի տղաները՝ պատանի Գագիկը և Ռուբիկը, սուրում էին իրենց դահուկներով, իսկ Վարպետը նայում էր նրանց հրճվանքով: Հետո մեծ խմբով շրջում էինք Կեչառիսի պատերի շուրջը, սար բարձրանում երեխաների հետ, Վարպետը՝ միշտ մեզ հետ, իբրև հավասարը հավասարի, իզուր չէր «ձյունի կոշիկները» բերել:

Եկավ Նոր տարվա գիշերը: Ճաշարանում բուրումնավետ, հսկա եղևնի հայտնվեց: Զարդարված տոնածառի շուրջը երեխաները հրճվանքով վազվզում էին Սաղաթելի գլխավորությամբ: Տոնական սեղանը նույնպես բուրում էր հրաշալի խորտիկներով:

Տոնական հանդիսությունն այդ գիշեր անմոռանալի դարձրին հատկապես Սոնա Այունցը և Գևորգ Էմինը իրենց անսպառ երգացանկով: Սոնան սքանչելի ձայն ուներ ու երաժշտական նուրբ



ճաշակ: Նա երգեց Պաղտասար Դպիր, Նիկոլ Գալանտերյան ու նաև համով գեղջկական ֆուկլորիկ պատառներ: (Հիրավի, Ռուբեն Հախվերդյանը մորից է ժառանգել իր երաժշտական տաղանդը):

Էմիլը՝ ոչ մեծ ճայն, որքան բացառիկ երաժշտական զգացողություն ու նուրբ կատարում: Բացի հայկական ընտիր երգերից, գիտեր նաև շոտլանդական ժողովրդական երգեր: Երեկոյի վերջում նրանք երկուսով «duo» էին կատարում, ոգևորված, առանց հոգնելու՝ մեծ հաճույք պատճառելով բոլորիս:

Վարպետը շատ սիրեց Սոնային:

– *Ի՞նչ հրաշալի կին է այդ Սոնան,-* ասաց:

Ավելի ուշ իմացա, որ իր մոր անունը նույնպես Սոնա է, երբ պատմեց, որ Շիրվանզադեն, Հովհաննես Աբելյանը և ինքը երեք քույրերի զավակներ են:

\* \* \*

Ծաղկաճորյան օրերն ամեն դեպքում հետաքրքիր և ուրախ անցան Վարպետի համար, իսկ ներկա գրողները գոնե ծանոթացան «Նավի» բնօրինակին:

\* \* \*

Ինչպես ասացի, Զարյանն այդ տարիներին աշխատում էր Գրականության և արվեստի թանգարանում՝ իբրև խորհրդատու (կոնսուլտանտ): Թանգարանի տնօրեն Սարգիս Մելիքսեթյանը (հայ արվեստի երախտավորներից, որին նույնպես բաժին էին հասել 37-ի բռնությունները), ինչպես և թանգարանի բոլոր աշխատակիցները մեծ ակնածանք ունեին Վարպետի հանդեպ: Հաճախ եմ նրանցից լսել, որ ընտանեկան իրենց հրավերքներին Մելիքսեթյանը և Զարյանը միասին էին գնում: Իսկ նրանցից Տանյա Կափլանյանը և Պերճ Ստեփանյանը շատ հպարտ էին, որ թանգարանի կազմակերպած իրենց միջոցառումներին նույնպես հեռավոր

շրջաններ Զարյանն իր ազնվաբարո մասնակցությունն էր բերում:

Հերթական իրենց «արշավանքից» վերադարձած Տանյան պատմում էր մի օր ոգևորված.

– *Պատկերացնո՞ւմ եք մեզ հետ հավասար, դժվարանցանելի ճանապարհով սարը քարձրացավ, տեղ հասանք, ու երբ հանդարտ ու սկեռուն լեռներին էր նայում, կարծես Աստված լինեք...*

Այո՛, նրա հետ շփվողները միայն խոր պատկառանք ու ակնածանք կարող էին ունենալ: Նրա ներկայությունը շքեղացնում էր շրջապատը:

Նա տարբեր էր...

\* \* \*

Ծաղկաճորից վերադառնալով՝ վերսկսեցի մեքենագրությունս, անվերջ մտահոգ աշխատանք, որ կարիք ուներ գրականագետների ուսումնասիրության, այլ ո՛չ կես օրով աշխատող մեքենագրուհու: Չասած, որ մեծ սենյակում երեք փակված սնդուկներ կային, որոնցից երկուսի մեջ Զարյանի ձեռագիր-նամակներն էին, իսկ մյուսի մեջ՝ հանգուցյալ կնոջ իրերը: Վարպետը մի քանի անգամ ակնարկել էր բացել այդ սնդուկները, բայց ես ամեն անգամ հետաձգում էի՝ հարմար ժամանակի, քանի որ մեծ գրասեղանին դիզված անթիվ ամսաթերթերն ու գրքերը կարիք ունեին կարգավորման՝ ըստ ժամանակագրության:

Վարպետին ասացի, որ քույրս՝ Սերիկը, Հանրային գրադարանում մատենագետ է, գուցե խնդրեմ՝ օգնի: Համաձայնվեց, և մի քանի օր հետո Սերիկը եկավ և սկսեց մասնագիտորեն կարգավորել այդ նյութերը:

Լսեցի մի օր, որ հայր ու որդի խոսում են ինչ-որ վարագույրների մասին: Տանը վարագույրներ չկային, ավելի ճիշտ կային «հրաշալի հովանդական վարագույրներ», որ կախող չկար: Քույրս, որ այնտեղ էր, միջամտեց խոսակցությանը՝ ասելով, որ Հանրային

գրադարանում մի շատ լավ արհեստավոր կա, որ կարող է օգնել: Երկու օր հետո նա եկավ Գուրգեն Եդիգարյանի հետ, բոլոր սենյակներում վարագույրները կախվեցին, և տունը կերպարանափոխվեց:

Ի դեպ, Գուրգենը դրամ չվերցրեց այդ աշխատանքի համար:

## ՀԱՎԱՏԱՐԻՄ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅՈՒՆ

### *Ոգու և ազատության ասպետը*

Լևոն Ներսիսյան (1931–1999), սիրված դասախոս, ճանաչված մտավորական, բացառիկ անհատականություն: Հին հունական պոեզիայի և դրամայի մասնագետ Լևոն Ներսիսյանը Երևանի համալսարանում 1960-ականներից շուրջ չորս տասնամյակ դասավանդեց անտիկ գրականություն, արևմտաեվրոպական համեմատական գրականություն: Իր խոր իմացությամբ, մտքի ազատ թռիչքով գրականությունը և արվեստը նա ուսանողին էր հաղորդում արտիստիկ բացառիկ ներշնչանքով, որ անշուշտ ժառանգել էր հորից՝ Մեծն Հրաչյա Ներսիսյանից: Պատահական չէր, որ նրա դասերին հաճախ ներկա էին նաև ուրիշ ֆակուլտետների և ինստիտուտների ուսանողներ՝ ներշնչված հեռանալով լսարանից:

Կուզենայի ասել՝ ով բախտ է ունեցել Ներսիսյանի ուսանողը լինելու, ողջ կյանքում կհիշի նրան սիրով ու ժպիտով: Ափսոս, որ այդ իմաստուն մտքերը մնացին բանավոր:

Ինձ նման երախտագետ մի ուսանող տարիներ անց գրել է նրա մասին.

*... Սակայն որպես մի հայ Սոկրատես, Ներսիսյանի մտավոր փայլատեսկումները առ այսօր զուտ բանավոր են մնացել, և Ներսիսյան մտածողի ելույթները մնում են միայն իր ուսանողների, մտերիմների, բաժակակից-արվեստագետների մոտապատկերներում:*

(Հ.Հ. AIM, 1992)

Համալսարանի դասախոսություններից զատ առիթ եմ ունեցել Ներսիսյանին տեսնելու արվեստակից ընկերների, ընտանեկան հավաքույթների շրջաններում: 1965-ի ամռանը Երևանում առաջին անգամ հյուրախաղերով հանդես եկավ Փարիզի «Ատելյե» թատրոնը, որ ընդունվեց մեծ խանդավառությամբ:

Հախվերդյանների տանը մտավորականների հերթական հավաք էր, որտեղ ներկա էր նաև Ներսիսյանը: Բնականաբար խոսակցության նյութը այդ օրը «Ատելյեն» էր՝ իր հետաքրքիր խաղացանկով՝ Տուրգենև («Մի ամիս գյուղում»), Ժան Անույ («Անտիգոնե»), Անրի Մոնիե («Թաղումը») և Բոմարշե («Սևիլյան սափրիչը»):

Ներկաներից թատերագետներ Լևոն Իսախանյանը, Սաբիր Ռիզաևը, Իսաչիկ Ավագյանն իրենց հիացական խոսքն ասացին բեմադրությունների մասին: Իսկ ֆրանսագիտակ Ներսիսյանը, լուռ լսելով բոլորին, վերջում իր խոսքն ասելով՝ վերստին փայլեց իր ուրույն մեկնաբանությամբ և իմացությամբ: Երբ իր խոսքը ավարտեց, Հախվերդյանը, գորովանքով նայելով կրտսեր ընկերոջը, ասաց.

*– Բա աիսոս չե՞ս, ա՛յ տղա, որ այդ փայլուն մտքերդ օդում ես թռղնում:*

Ներսիսյանը լսեց և անխղճորեն պատասխանեց.

*– Այսօր զգացի, որ եթե մեռնեմ, իմ մասին լավ մահախոսական գրող կլինի:*

Հախվերդյանը գլուխը տխուր կախեց, ապա երկու Լևոնները գրկախառնվեցին:

Դա այն Ներսիսյանն էր, որին բնորոշվել է.

*– Լևոնը շքեղ մի անհատականություն՝ քաջառիկ իր մտային և հոգևոր խորությամբ և անկրկնելի հմայքով:*

Արտո Չաքմաքչյան

Ինչպես կտեսնենք, Լևոն Ներսիսյանը սովորական այցելու չէր Զարյանի համար: Նրա ամենօրյա ուշադրությունը Վարպետին, հետաքրքիր զրույցները նրանց կարծես դարձրել էին հարազատներ: Ինչ խոսք, Ներսիսյանը գտել էր իր **համախոհին, զրուցակցին, ուսուցչին**:

Նրանց զրույցները Էմիլ Վերհարնի, Միգել դե Ունամունոյի, Ալֆրեդո Գալիերթիի, Օրացիո Բաչիի, Լոուրենս Դարելի և ուրիշների մասին հիշողությանս մեջ մնացին որպես գրական փայլատակումներ, երբ սիրելի մեր «Սուկրատեսին» այժմ տեսնում էի Զարյանի դիմաց աշակերտի դերում, զմայլված իր ուսուցչով:

Վարպետին ասացի, որ համալսարանում Ներսիսյանի դասերը լսելու էին գալիս ուրիշ ֆակուլտետների ուսանողներ նույնպես, որին պատասխանեց.

– *Իմ դասերիս նույնպես կգալին...*

Հիշենք, որ Զարյանը ընտանիքով (կնոջ՝ Թագուհի Զարյանի և երեք երեխաների՝ Վահեի, Արմենի և Նվարդի հետ) առաջին անգամ Հայաստան է եկել 1922-ի աշնանը: Նույն թվականից մինչև 1924-ի հունիսը Երևանի համալսարանում դասավանդել է «Բաղդատական գրականության ընդհանուր պատմություն»:

Ի դեպ, Կոստան Զարյանի ուսանողներից է եղել հանգուցյալ Սիրանուշ Մարտիրոսյանը (հետագայում Հայաստանի վաստակավոր մանկավարժ, երկար տարիներ Կրուպսկայայի անվան օրինակելի դպրոցի հայոց լեզվի ուսուցչուհի): Նրա որդին՝ անվանի ճարտարապետ Մուրադ Հասրաթյանը, մի առիթով ասաց, որ Զարյանի երևանյան դասախոսությունների իր մոր տետրը պահպանված է: Սա կարող է անշուշտ հետաքրքրել ուսումնասիրողներին:

Այդ տարիներին երկրում արդեն սկսվել էին քաղաքական

բոնությունները, և Զարյանները ստիպված էին հեռանալ Հայրենիքից:

Իր սովորության համաձայն՝ Վարպետը, սենյակում քայլելով մտաբերեց.

– *Արտագաղթին մեզ օգնեցին պաշտոնյաներ Գրիգոր Չոբարյանը (1888–1962) և Սուրեն Արևշատյանը»:*

Փարիզ հասանք տխուր և մտահոգ: Վահեն (11 տարեկան – Ս.Ա.), նայելով եռացող փողոցին, ասաց.

– Հայրի՛կ, վերադառնանք Երևան...

Հիշենք, նույն այդ ժամանակ Ռուբեն Տեր-Մինասյանի (1882–1951) ջանքերով փրկվում է նաև Ալեքսանդր Թամանյանի ընտանիքը, երկու փոքրիկ նավակներով հատելով Արաքսը՝ դեպի Պարսկաստան:

Երկու այդ հանճարները հետագայում վերստին դարձան Հայրենիք:

\* \* \*

Հիշում եմ, մի օր Վարպետը նստած էր բազմոցին, իսկ Ներսիսյանը կանգնած էր դիմացը՝ փայլող, ժպտուն աչքերով: Հանկարծ ծնկի եկավ նրա առջև, այո՛, ծնկի եկավ՝ երեխայի նման խնդրելով.

– *Վարպե՛տ, հիշե՛ք, խնդրում եմ, Կորֆուն և Դարելին (Lawrence Durrell, 1912–1990):*

Նրան այդ դիրքում տեսնելով՝ ես զարմանքից քարացել էի... սկսվեց հերթական զրույցը, որից հիշողությանս մեջ մնաց Զարյանի՝ Կորֆու կղզու և իր շրջապատի մարդկանց նկարագրությունը:

Հիշեցնենք, որ այդ կղզում նա ապրել է 1935–37-ին երկրորդ կնոջ՝ նկարչուհի Ֆրենսիս Բրուքսի հետ: Այստեղ շրջապատված էր նույնպես հետաքրքիր դեմքերով, ինչպես Թեոդոր Սթեֆանիդես, Տ. Կոմս, Մաքս Նիմիեք ու հատկապես անգլիացի գրող Լոուրենս

Դարել:

Վերջինս այդ տարիների իր գրառումների հիման վրա հեղինակել է իր «Պրոսպերոյի կղզին» հատորը, որտեղ Ջարյանը գլխավոր կերպարներից է՝ «ալեհեր, տիրական, առասպելական» քնորոշմամբ:

Հեղինակը գիրքը նվիրել է իր չորս հերոսներին՝ մակագրությամբ.

– Այս գրքի հերոսները իրական մարդիկ են, որտեղ ներկայացված են իրենց համաձայնությամբ: Նրանցից չորսին՝ պարոնայք Թեոդոր Ստեֆանիդեսին, Ջարյանին, Լե Կոնտ Ծ-ին և Մաքս Նիմեքին երախտագիտությամբ և սիրով հեղինակը նվիրում է գիրքը՝ շնորհակալ, որ նրանք ընդունեցին իրենց անունները հրապարակել նրա էջերում:

Տարիներ անց Երևանում բուկինիստական խանութից ունեցա գրքի ֆրանսերենը, որի 199 էջերից 70-ի մեջ իր ուրույն անհատականությամբ ու ինտելեկտով հիշատակվում է Կոստան Ջարյանը:

1947-ին Դարելը գիրքը Լոնդոնից Ջարյանին է ուղարկել մակագրությամբ.

– Մեծ և սիրելի Ջարյանին հեղինակից, որը հպարտ է նրա ընկերներից մեկը լինելու:

Նշենք նաև, որ Լոուրենս Դարելը հետագայում նույնպես հաճախ է անդրադարձել Ջարյան-անհատին՝ մեծարանք-հարգանքով:

\* \* \*

Կիրակի մի օր շտապ գործ պետք է հասցնեի «Գրական թերթին»: Սկսեցի մեքենագրել, իսկ Վարպետը քայլում էր մտահոգ: Հետո դուրս նայելով պատուհանից՝ ասաց.

– Լեոն այսօր չի գալու, նա հիմա խաշ է ուտում, ամեն կիրա-



*կի խաշ է ուտում... ի՞նչ է այդ խաշը...*

Ես աշխատեցի «արդարացնել» Լեոյին՝ ասելով, որ խաշը ա-  
ռիթ է պարզապես տղամարդկանց կիրակնօրյա հավաքի, զրույցի:  
Մինչդեռ Վարպետը շարունակեց.

*– Գիտե՛ս՝ Լեոյի մեծ հայրը Պոլսում խոհարար է եղել...*

Ակնարկը պարզ էր, նա կուզենար Լեոյին տեսնել ամեն օր:  
Նա մենակ էր...

## «ԱՍՏՂԵՐ ԵՎ ԱՐՅՈՒՆ»

1961-ին Զարյանը Հայաստան է այցելում դատեր՝ Նվարդի հետ:

– 1961-ի հունիսին Նվարդիկիս հետ մի քանի ամսով Հայաստան այցելեցինք,- ասաց Վարպետը:

Հաջորդ 1962-ին վերադառնում է կնոջ՝ նկարչուհի Ֆրենսիս Բրուքսի հետ, վերջնական հաստատվելով Հայրենիքում: Բրուքսը այդ ժամանակ արդեն հիվանդ էր սպիտակարյունությամբ:

Տարիներ անց բժշկուհի բարեկամուհու՝ Ամալյա Գաբրիելյանի տանը հանդիպեցի Բրուքսին բուժող բժիշկ Ժենյա Խաչատրյանին, որը այդ տարիներին աշխատել էր Երևանի արյան փոխներարկման հիվանդանոցում: Նա ինձ պատմեց հետևյալը.

*Ֆրենսիսը պառկեց մեր հիվանդանոցում 1963-ին: Նա լեյկեմիա (սպիտակարյունություն) ուներ: Այդ ժամանակ Զարյաններն ապրում էին հյուրանոցում: Բարեկազմ, ոչ շատ գեղեցիկ, բայց հետաքրքիր արտաքինով, անշուշտ, տարբերվում էր մյուս հիվանդներից:*

*Ամուսինն այցելում էր ամեն օր՝ առավոտյան: Ծննդյան օրը նրան թեյի գավաթներ և շոկոլադի տուփ նվիրեցի: Երբ վիճակը ծանրացավ, որոշեցին Հոլանդիա տեղափոխել, որտեղ ապրում էր որդին: Այնտեղից ինձ փոքրիկ ծանրոց ուղարկեց՝ մեջը սպիտակ մոհերից շալ և մի սպիտակ փետուր, որ մինչև այսօր չգիտեմ դրա նշանակությունը, բայց պահեցի իբրև հիշատակ:*

(Ժենյա Խաչատրյան, Երևան, հուլիս, 1981)

Բրուքսը մահացել է Հոլանդիայում 1964-ին:

Ինչպես ասացի, կնոջ հուղարկավորությանը Հոլանդիա մեկ-

Նելու թույլտվություն Ջարյանին չարտոնվեց:

\* \* \*

Ջարյանի աշխատասենյակի պատերին փակցված էին նկար-  
չուհի Ֆրենսիս Բրուքսի աշխատանքներից, իսկ դիմացի ձախ կող-  
մը կրտսեր որդու՝ Հովանի լուսանկարը:

Մի օր, թերևս «մոռանալով» իմ ներկայությունը, մոտեցավ  
լուսանկարին և սկսեց բարձրաձայն խոսել նկարի հետ.

... *Hello baby*....

Ես դադարեցի մեքենագրել, որպեսզի չխանգարեմ մենախո-  
սությանը:

Որոշ լռությունից հետո պատմեց Հովանի մասին, որ կրթութ-  
յամբ մաթեմատիկոս է, Հոլանդիայում է ապրում՝ նավի վրա: Հույս  
ունենք, որ մոտ ապագայում կայցելի նրան:

\* \* \*

Աշխատասենյակի աջ կողմի մեծ գրասեղանին էր նաև գե-  
ղագիր անգլերենով, փայլուն աստղերով ձևավորված խոշոր մի  
գիրք, որ վերնագրված էր «Աստղեր և արյուն»: Վարպետն ասաց,  
որ ամբողջ գիրքը Ֆրենսիսը ձեռքով է արտագրել և նկարագար-  
դել, բայց հրատարակված չէ: Ասաց նաև, որ Դարելը շատ սիրեց  
այն:

Ես զգուշորեն թերթեցի գիրքը, որ իրոք շատ տպավորիչ էր,  
իսկ ավելի ուշ նշմարեցի, որ այդ գիրքը միշտ նույն տեղում է մնում  
անշարժ, աչքի առաջ, թերևս որպես անխոս ներկայություն հան-  
գուցյալ կնոջ:

\* \* \*

Աշխատանքի գնալիս ամեն ուրբաթ առավոտ «Գրական  
թերթ» կգնեի լրագրավաճառից, երբ մի օր հանդիպեցի Ալբերտ

Կոստանյանի (1935–2002) հոդվածը «Տատրագոմի հարսի» մասին՝ «Հղացման ազնվությունը» վերնագրով («Գրական թերթ», 1967, 24 մարտ):

Երբ ներկայացրի Վարպետին, խնդրեց, որ բարձրաձայն կարդամ: Լսեց, հավանեց: Կարճ հատվածներ.

– Կոստան Զարյանը 1915-ը վերապրած մարդկանց սերնդի մեծ ներկայացուցիչն է, որի անձն ու գործը որքան ըմբռնելի, նույնքան զարմանալի է թվացել մեզ:

Արտիստիկ խառնվածքը մեր ազգային նկարագրի այն որոշիչներից է, որ աղերս ունի կյանքի բնագոյի, լինելիության կերպի հետ...

Կոստան Զարյանի ստեղծագործությունը համայնական հուզումների խտացված հանդիսարանն է, թեև յուրաքանչյուր առանձին ամփոփ երկը նաև իր շեշտված արևմտահայկական կամ արևելահայկական սկունքն ունի՝ հաճախ խաչաձևված եվրոպական գրական մտայնությամբ, որից առել ու որին տվել է մեծ Վարպետը: «Տատրագոմի հարսի» մասին խոսելիս բնական է արևմտահայկական գրական ավանդույթներին:

«Տատրագոմի հարսի» հիմքում ընկած է ակնարկած շրջանի (բայց ոչ թվականի) մի մասնավոր միջադեպ, որ վերնագրված է նաև *սկանաստեսի հուշերով* (խոսքը Ռուբեն Տեր-Մինասյանի «Հայ յեղափոխականի մը յիշատակները» գրքի մասին է – Ս.Ա.):»:

\* \* \*

Գրողների միությունը նախատեսել էր Զարյանին նվիրված մեծարման երեկո, որը կայացավ մարտի 7-ին (1967) գրողների տանը: Դահլիճում գրեթե ազատ տեղեր չկային, ներկա էր բանիմաց, գրասեր հասարակություն:

«Բեմի կենտրոնում՝ Զարյանի աջ կողմը նստած էր Սաղաթել Հարությունյանը, ձախ կողմը՝ Լևոն Ներսիսյանը և Գևորգ

Էմինը: Հարությունյանի բացման խոսքից հետո ելույթ ունեցավ Ներսիսյանը՝ ներկայացնելով գրողի ստեղծագործությունը խոր իմացությամբ և իր բնորոշ տպավորիչ խոսքով: Ինչպես սպասելի էր, հանդիսականները խանդավառ էին Ներսիսյանի ելույթից:

Երրորդ, վերջին խոսնակը Գևորգ Էմինն էր, որը, իր խոսքն ասելով, նշեց.

*– Բազմահարուստ կյանք է ունեցել Կոստան Զարյանը, ժամանակակից մեծագույն գրողներից մեկը, և երիցս բազմահարուստ ստեղծագործություններ՝ բանաստեղծություն ու պոեմ, վիպակ ու վեպ, էսսե ու ողբերգություն, պիես ու հորված և այդ ամենը գրված ոչ միայն հայերեն, այլև ռուսերեն, ֆրանսերեն, անգլերեն, իտալերեն՝ իր իմացած բազում այլ լեզուներով»:*

Զարյանին ողջույնի խոսք ունեցան Ստ. Ալաջաջյանը, Ս. Կապուտիկյանը, բժիշկ Ամադյանը:

Երեկոյին ասմունքով հանդես էին գալու անվանի դերասաններ Բաբկեն Ներսիսյանը, Վոլոդյա Աբաջյանը, Գեղարվեստաթատերական ինստիտուտի ուսանողներ Ազատ Գասպարյանը, Ժիրայր Ավետիսյանը և ուրիշներ: Ծրագիրը «Տատրագոմի հարս»-ից պատրաստել էինք այդ ինստիտուտի հայ գրականության համակրելի դասախոս Էլզա Գյուլեսերյանի հետ:

Առաջին ասմունքողը Աբաջյանն էր, ապա Ժիրայր Ավետիսյանը. վերջինս հազիվ էր արտասանել իր առաջին տողերը.

*– Ձյունը տնքում էր նրանց քայլերի համառ թափի տակ...* երբ Բաբկեն Ներսիսյանը դահլիճից հուզված դուրս գնաց: Անվանի դերասանի և ուսանողի հատվածները զուգադիպել էին:

Չնայած դրան երեկոն հաջողությամբ շարունակվեց, ասմունքողները՝ մեկը մյուսից ոգևորող և տպավորիչ իրենց խոսքով:

Երեկոն ավարտվեց երաժշտական մասով՝ Լ. Զաքարյանի, Խ. Պալյանի, Ա. Հարությունյանի և Ռ. Ահարոնյանի մասնակցությամբ:

յամբ:

Վարպետը գոհ էր, հանդիսականները՝ նույնպես:

Պիտի ասեմ, որ դա եղավ Զարյանին նվիրված միակ հանդիսությունը կենդանության օրոք:

\* \* \*

Զարյանը սիրում էր վայելույզ հագնվել: Երբեք չեմ տեսել հենց այնպես տնային հագուստով:

Մայիսյան մի արևոտ, պայծառ օր էր: Երբ իր տուն հասա, ինքը պատրաստվում էր թանգարան գնալ, թեև քաղաքում սրճագույն թիկնոց էր գցած: Ասացի, որ շատ տաք է, գուցե կարիք չկա թիկնոցի: Ինքը, թե.

– *Հենց այնպես, ձևի համար:*

Դա նույնպես ինքն էր, փողկապ չէր կապում, այլ papillon:

Մի օր ասաց, որ կուզենար նոր հագուստ գնել, բայց դժվար է գտնել: Ես վարանոտ ասացի, որ արդեն իր ունեցածները շատ են, իսկ Արմենը, որ տանն էր, անխոս հոնքերը բարձրացրեց ու պահարանին մոտենալով՝ հաշվեց 27-ից ավելի շքեղ կոստյումներ: Երեքս էլ մի լավ ծիծաղեցինք, իսկ Վարպետը «արդարանալու» համար ասաց.

– *Դե, ի՞նչ կա որ, այնպես, փոփոխության համար:*

Քույրս առաջարկեց կարգի բերել ունեցած կոստյումները. երկու օր անընդմեջ երկուսով արդուկեցինք բոլոր կոստյումները. Վարպետը շատ գոհ մնաց և երկուսիս ասեղնագործ գեղեցիկ պատյանով սանրեր նվիրեց:

\* \* \*

Գարնանային մի օր «Պրոսպեկտի» բուկինիստում անսպասելի տեսա և անմիջապես գնեցի Վիեննայի հրատարակությամբ Զարյանի «Երեք երգերը», որի մասին միայն Արշակ Չոպանյանի և

Ավետիս Ահարոնյանի գրախոսականներն էի կարդացել:

Կարմիր գույնի, ոչ սովորական կազմով գրքի նախավերջին՝ 143-րդ էջին գրված էր. «Վերջ», 1915.

Հաջորդ օրը, երբ գիրքը ցույց տվեցի Վարպետին, ասաց, որ առաջին անգամ լույս է տեսել իտալերեն՝ Ալեսանդրո Ռոսիի թարգմանությամբ՝ մեծ արձագանք ունենալով անգամ Իտալիայից դուրս. նամակներ՝ Ռաբինդրանատ Տագորից, Միգել դե Ունամունոյից և ուրիշ շատերից:

«Երեք երգերը» Զարյանը գրել է միաժամանակ ֆրանսերեն և հայերեն:

\* \* \*

Ապրիլ. Վարպետի և Ներսիսյանի այդ օրվա գրույցը Լենինի մասին էր: Հիշեց նախ, որ Փարիզի սրճարաններից մեկում կորավ ֆրանսերեն իր առաջին բանաստեղծությունների տետրը: Ապա՝ Ժնևի «Ռադուգա» ամսագրում (1907 թ.) ռուսերեն առաջին «պրոլետարական» բանաստեղծությունները, հանդիպումները Լենինի հետ այնտեղ կաֆե «Լիրիկում»... Այդ շրջանում նա մեկուկես տարով բանտարկվում է Մյունխենի բանտում:

Զրույցի վերջում Վարպետը իրեն բնորոշ ինքնամփոփ ձայնով ասաց.

– *Բանտարկությունից հետո Փարիզի Avenue d'Orlians-ի սրճարանում հանդիպեցի Լենինին, ինձ տվավ «Պրոլետարի» թերթի 2 տարվա հավաքածու և 50 ֆրանկ:*

Այդ օրը, երբ Ներսիսյանը լուռ պատրաստվում էր դուրս գնալ, հարցրի, թե վերջապես ինչպես տեսավ Լենինին ինքը անձամբ, որին պատասխանեց.

– *Ծակոդ խուզարկու աչքեր ուներ, ամեն բան գիտեր այդ Լենինը...*

## ԱՐՄԵՆ ԶԱՐՅԱՆ

### Ճարտարապետ, տեսաբան, Քաղաքացի՝ Արմեն Զարյան (1919–1994)

Աշխատանքի բերումով շուրջ երկու տասնամյակ առիթ եմ ունեցել առնչվելու այդ մեծ հայորդու հետ, մշտապես հիացել նրա հայրենանկեր գործունեությամբ:

Արմեն Զարյանը Իտալիայից ընտանիքով Հայաստան դարձավ 1963 թ.-ին՝ հորից՝ Կոստան Զարյանից, մեկ տարի հետո: Ինչպես արդեն ասացի, նրանք ապրում էին Աբովյան 17 շենքի հարմարավետ բնակարանում՝ շնորհիվ մեծարգո Յակով Զարոբյանի:

Հայրենիքում շուտով ունենալով ճարտարապետության իր արվեստանոցը Երևաննախագիծ ինստիտուտում՝ Արմեն Զարյանը աշխատում էր միաժամանակ ԳԱ արվեստի ինստիտուտում: Այստեղ նրա նախաձեռնությամբ ստեղծվեց Հայկական միջնադարյան ճարտարապետության ուսումնասիրման ծրագիր՝ Հռոմի և Միլանի անվանի ճարտարապետներ Ալպագո Նովելլոյի, Պաոլո Կունեոյի, Թոմազո Բրեջչա-Ֆրատադոկիի, Մաուրիցիո Գաուդիի և մյուսների համագործակցությամբ, որ շարունակվեց շուրջ երեք տասնամյակ:

Հայ-իտալական այս աննախադեպ գործունեության շնորհիվ 1974–98 թթ. Միլանում և Վենետիկում լույս տեսավ “Documenti di architettura Armena” («Հայկական ճարտարապետության վավերագրեր»)՝ հուշարձանների շքեղ պատկերներով, չափագրություններով և քարտեզներով 23 մատենաշարը:

Յուրաքանչյուր հատոր ներկայացված է հայ և օտարազգի անվանի ճարտարապետի և պատմաբանի զուգահեռ հոդվածով՝ դարաշրջանի քաղաքական իրադրության մեկնաբանմամբ: Հատորների հայ հեղինակներից են՝ Ա. Սահինյան, Վ. Հարություն-



յան, Հ. Խալփախչյան, Ա. Զարյան, Ս. Տեր-Ներսիսյան, Մ. Հասարթյան, Հ. Վահրամյան, օտարազգի՝ Ալպագո Նովելլո, Պաոլո Կունեո, Անտոնի Մաստերս, Վ. Կլայս, Ֆ. Գոնֆոլդո, Ն. Տոկարսկի, Վ. Կլայս, Ն. և Մ. Թիերիներ և ուրիշներ:

Վավերագրերը հիմնականում ներկայացված են իտալերեն և հայերեն, որոշ հատորներ նաև անգլերեն, ֆրանսերեն կամ գերմաներեն՝ հայերեն թարգմանված հմուտ թարգմանիչներ Լևոն Զեքիյանի, Տիգրան Գույումջյանի, Սիրարփի Փափագյանի, Զուլալ Ղազանջյանի և ուրիշների կողմից:

\* \* \*

Վավերագրերի հրապարակմանը զուգահեռ հայ ճարտարապետության միջազգային ճանաչմանը և գնահատմանը մեծապես նպաստեցին նաև համագործակցության նախաձեռնությամբ օտար մի շարք երկրներում (Լիբանան, Իրան, Գերմանիա, Շվեյցարիա, Ավստրիա, ԱՄՆ, Արգենտինա, Բրազիլիա, Ուրուգվայ և այլն) կազմակերպված գիտաժողովները, ցուցահանդեսները, բանախոսությունները, որտեղ հատկապես անգնահատելի է Ալպագո Նովելլոյի ավանդը:

Հայ-իտալական համատեղ այս գործունեությունը, կարևոր ներդրում հանդիսանալով հայ մշակույթի պատմության մեջ, աներկբա համարվել է առաքելություն, իսկ Արմեն Զարյանը՝ այդ գործի «ոգին և առանցքը»:

\* \* \*

ԳԱ արվեստի ինստիտուտում 6 տարի աշխատելուց հետո ինձ աշխատանք առաջարկվեց նորաստեղծ Հայկական հանրագիտարանի արվեստի և ճարտարապետության խմբագրությունում: Այստեղ թեև աշխատավարձը անհամեմատ ավելի բարձր էր, բայց ես տխրությամբ ընդունեցի առաջարկը՝ ավստոսելով տարիներով հավաքած սփյուռքահայ մշակույթի նյութերս:

Ամեն դեպքում ինքս չեի որոշողը: 1970-ի սեպտեմբերից սկսելով նոր պարտականություն՝ շուտով զգացի Հանրագիտարանի ստեղծման կարևորությունը՝ որ պահանջում էր լուրջ և հետևողական աշխատանք:

Ապագա Հանրագիտարանի ստեղծմանը ԳԱ նախագահության աջակցությամբ կազմված էր գիտախմբագրական կոլեգիա, որտեղ ընդգրկված էին ժամանակի ճանաչված մտավորականներ՝ Վիկտոր Համբարձումյանի գլխավորությամբ:

Խմբագրության ճարտարապետության գիտաճյուղային խորհրդի նախագահ էր ընտրված Արմեն Զարյանը՝ շարունակելով մինչև վերջին հատորը: Նա իր անձնական գրադարանից մեզ նվիրեց մասնագիտական մի շարք գրքեր, որոնց թվում Larousse-ի հրատարակությամբ շքեղ պատկերազարդ արվեստի երկհատոր, որ շատ օգտակար եղավ՝ հոդվածներ համեմատելու, քարտեզների պատկերազարդման վերատպությունների համար:

Տարիներ շարունակ արվեստի և ճարտարապետության խմբագրությանն Արմենն աջակից էր ոչ միայն կարևոր հոդվածներով, այլև հաճախակի իր բարյացակամ ներկայությամբ հետևելով հանրագիտարանի առաջընթացին: Սակայն, հայր և որդի Զարյանները, մեծապես գնահատված և հարգված լինելով մտավորական շրջանակներում, միշտ չէ, որ հարթ էր նրանց ստեղծագործ ուղին:

Ահա ինչպես է նրանց բնորոշել արձակագիր Աղասի Այվազյանը.

*– Ո՞ր ընտրյալ հայր չի անցել ազգային գողգոթան, ո՞ր ընտրյալ հայր իր ներսում չի կրել Հայոց մեծ աշխարհը, որը իրականում չկա: Եվ նրանք մնում են միայնության մեջ: Միայնակ են բոլոր ընտրյալները: Մեկուսացած ու միայնակ: Նրանց ոգեկան շքեղությունը, գեղագիտական բարձրակառույց տվյալները պատկանում են այն մեծ Հայաստանին, որ Աստծո տիրույթում է և ոչ թե հողի վրա:*

*...Կոստան Զարյանը Հայոց աշխարհից մնացած խլիպի մեջ փորձում էր տեղավորել իր ներգոյում տակավին ամբողջական պահպանված երկրի էությունը, նրա անխաթար կերպարը: Բայց ինչպե՞ս, ինչպե՞ս... Նա մենակներից մեկն էր ...*

*Ազգային ներշարժարանքի ատամների արանքում... Նույն այդ ատամների արանքում հայտնվեց նրա որդին՝ Արմեն Զարյանը ...*

Աղասի Այվազյան, «Ընտրյալը»:

Մի առիթով խոսելով հոր մասին՝ Արմենն ասաց.

*– Զարյանը խորապես համոզված էր, որ գալով իր երկիրը, այստեղ՝ Հայաստանում, պիտի կարողանար հրատարակել իր ամբողջ գործերը ու չէր կարող երևակայել, որ այստեղ գրականությունը օգտագործվում է որպես քաղաքական գործիք, ինչպես վարվեցան «Նավը լերան վրա» վեպի հետ:*

\* \* \*

Հիշում եմ, մի օր Արմենը խմբագրություն եկավ խիստ հուզված ու բորբոքված: Եկել էր ինչ-որ պաշտոնական նիստից անմիջապես հետո: Խմբագրության ճարտարապետության մասնաճյուղի պատասխանատու Արա Ստեփանյանի (բազմագիտակ ու լուսավոր մի անհատականություն) հետ առանձնացան սենյակներից մեկում, բայց դուռն անմիջապես նորից բացվեց, Արմենը ինձ նույնպես ներս կանչեց: Պատմեց այդ օրվա եղելության մասին. տարածայնություն. բորբոքված կրքեր...

Մենք անխոս լսեցինք, հետո Արան թերևս խոսակցության նյութը փոխելու համար ասաց.

*– Պարոն Զարյան, չե՞ք մտածել Իտալիա վերադառնալու մասին:*

Զարյանը խոժոռվեց, կապույտ աչքերից կարծես կայծեր ցուլացին ասելով.

*– Հասկացի՞ր, Արա՛, ես գինւոր եմ և չե՛մ կարող դասաւիթ լինել...*

Տարիներ են անցել, և այս արտահայտությունը հետամուտ է ինձ մշտապես: Համոզված եմ, որ ո՛չ միայն ինձ, այլև Հայրենիքից կամա թե ակամա հեռացած ամեն մարդու խղճի տանջող ձայնն է դա, Արմեն Զարյանի ազնվաբարո ձայնը:

Երևանում Արմեն Զարյանի հեղինակությամբ լույս են տեսել մասնագիտական նրա չորս կարևոր հատորները՝ «Իտալական արդի ճարտարապետությունը» (1927–1960), 1975, «Արևմտյան Եվրոպայի արդի ճարտարապետությունը», 1979, «Ակնարկներ հին և միջնադարյան Հայաստանի քաղաքաշինության պատմություն», 1986, «Հայ ճարտարապետության տարածումը և Լեոնարդո դա Վինչիի վարկածը», 1994, «Հայ ճարտարապետությունը, քննական և տեսական հարցեր», 1996:

\* \* \*

Իբրև անեկդոտ. 60-ականներին Մոսկվայում կայանալիք ճարտարապետների համագումարին Հայաստանի անվանի ճարտարապետների խմբում Մոսկվա է մեկնում նաև Արմեն Զարյանը: Համագումարից հետո մասնակիցները մնում են ևս մի քանի օր՝ մոսկովյան հանրախանութներից գնումներ անելու, ինչպես բոլորը, այնպես որ Արմեն Զարյանը օդանավակայան է գնում մենակ: Մոտենալով օդանավակայանի ծառայողին՝ նա անգլերենով հարցնում է, թե որտեղից պետք է Երևան թռչի. մարդը ուսերն է թոթվում՝ չհասկանալով ասածը: Արմենը նույն հարցը կրկնում է ֆրանսերեն, ապա գերմաներեն և մնում անպատասխան: Ճարտարապետը հուսահատ, բռնում է գլուխը՝ բացականչելով.

*– Աստվա՛ծ իմ, սա ի՞նչ երկիր է, ոչ մի լեզու չեն խոսի:*

Նույն վայրկյանին չորս կողմից հայեր են հայտնվում՝ ասելով.

*– Ախպե՛ր ջան, ի՞նչ է պատահել, մասն օգնենք...*

## ՄԵԾՆ ԶԱՐՄԱՆԱԼԻ ԿՈՍՏԱՆ ԶԱՐՅԱՆԸ

Շարունակելով «Սպանիայի» մեքենագրությունը՝ օրեցօր զարմանքով ճանաչում էի ոչ միայն մեծատաղանդ գրողին, այլև պատմաբան, փիլիսոփա, արվեստաբան Կոստան Զարյանին, մտածելով՝ ինչ մեծ պարզև է լինելու հայ ընթերցողի համար այս գրքի լույս աշխարհ գալը:

Ասեմ, որ մեքենագրությունները ընդհանրապես կատարում էի երկու օրինակով: Հերթական գլուխը վերնագրված էր «Հայաստանի Լևոն թագավորը»: Վարպետի թույլտվությամբ այս գլխի որոշ էջեր մեքենագրեցի երեք օրինակով՝ երրորդը պահելով օրագրիս մեջ, որից հատվածներ.

*– Մեզ մոտ Լևոն Հինգերորդի մասին նյութեր ժողովողներն ու գրողները եղել են մեծ մասամբ հայ կաթոլիկները՝ կղերական կամ աշխարհիկ: Հասկանալի պատճառներից դրդված՝ նրանք ուզել են այն հավատը ներշնչել, որ մեր ազգային դժվարությունների ժամանակ, եթե ոչ ամբողջ հռոմեադավան մարդկությունների կղերական բարձր դասակարգը մեզ հետ է եղել: Ու իբր շոշափելի օրինակ նրանք մեջտեղ են բերում Լևոնի այդ վարկածը. տեսե՛ք, կաթոլիկությունը մինչև ո՞ր է գնում, երեք քաղաքներ տվին մեր վերջին թագավորին, այս արին, այն արին...*

*... Ու պատրաստ ենք մոռանալու այն բոլոր մահացու վնասները, որ նույն այդ կաթոլիկությունը և նրա հետ սերտորեն կապված Եվրոպան մեզ հասցրին:*

\* \* \*

Գրամեքենայիս առաջ՝ այլևս վարժվել էի լսել Վարպետի հիշողությունները, ինչպես՝ Զոհրապի մասին.

...1914-ն էր, Պոլսում ամեն մարդ տագնապած էր: Կառավարությանը վրա քայլում էինք Ջոհրապի հետ: Գնացքը կանգնած էր: Պասապորտ (Ջարյանը այդ ժամանակ ուներ պարսկական անձնագիր) հանեցի, իրեն մեկնեցի, ա՛ն, ա՛ն այս պասապորտը և գնա՛: Տխուր աչքերիս նայեցա՛վ, մեջքը կռացրեց և ասաց.

– Զա՛րկ, զա՛րկ, չեմ կրնար...

Մեկ ուրիշ անգամ հիշեց (խոսքի մեջ որոշ բառեր Շամախու բարբառով) իր հայրենակից պարուհի Արմեն Օհանյանի հետ կապված մի գվարճալի դեպք Փարիզում: Ի դեպ, ժամանակին տասնյակ երկրներում բավական ճանաչման հասած Սոֆյա-Փիրբուդադյան-Արմեն Օհանյանը հայտնի էր որպես պարսիկ պարուհի: Հարցրի Վարպետին. ինչո՞ւ պարսիկ և ո՞չ հայ. պատասխանեց.

– Էքսցենտրիկ էր, հայություննե կփախչեր...

\* \* \*

«Սպանիայի վերջին գլուխներն էին մնացել մեքենագրելու՝ «Երեք հսկաներ», «Էլ Գրեկո», «Վելասկեզը», «Գոյան», ապա՝ «Տոլեդո» և «Հրաժեշտ»: Այս գլուխները և գիրքն ամբողջությամբ հեղինակի փիլիսոփա-արվեստաբանական անկրկնելի մեկնաբանություններ են Իսպանիայի պատմության ու մշակույթի, ինչպես նաև այդ ժողովրդի ոգու մասին: Ես կարծես չէի շտապում վերջացնել այն:

Մեքենագրությունն ավարտվում էր, ու մտածում էի, թե ինչ մեծ պարգև է լինելու բոլորիս համար գրքի լույս աշխարհ գալը: Նախ յուրովի ճանաչելու Իսպանիան՝ իր պատմությամբ ու մշակույթով, իր ոգեղեն էությամբ ու կերպարներով և ամենակարևորը՝ այդ ամենը զարյանական խորաթափանցությամբ համադրված ու համեմատված հայկականի հետ:

Պրադոյի պատկերասրահում իր իսկ խոսքերով.

... «երկու ամիս շարունակ, գրեթե ամեն օր, ես այցելել եմ նրա դահլիճները, ամեն օր մի նոր բան եմ տեսել և դեռ չեմ կարող ասել, որ նյութը սպառված է»: Եվ ապա.

– Միջնադարյան վարպետները, որոնց մեջ նաև մեր մանրանկարիչները, նկարը սկսելուց առաջ ծով էին պահում և աղոթքներով պատրաստում իրենց հոգին: Նրանց համար գույները փշրելը, խառնելը, բաղդատելը նույնքան սրբազան էր և արարողական, ինչքան սրբազան է և արարողական պատարագիչի զգեստավորումը: Լույսը և սուվերը, ներքնախոր ոսկին, քղամիդների կարմիրը կամ կանաչը, երկնային կապույտը, աչքերի մեջ դրված կայծը, ամեն ինչ խորախորհուրդ նշանի բնույթ էր առնում և այն տիեզերական վերացման նշանակությունը, որով նրանք մինչև այսօր դեռ կենդանի են:

\* \* \*

Հարցրի մի օր Վարպետին, թե որևէ գործ գրա՞ծ է իսպաներեն, պատասխանեց.

– Իսպաներեն կիսուեի, բայց չեմ գրած, իտալերենը կ'իսանգարեմ...

Աշխատանքի վերջում, գրեթե ամեն օր, Վարպետը հարցնում էր.

– Այսօր կարո՞ղ ենք միասին ճաշել ...

Եվ գրեթե ամեն անգամ ես տատամսած ներողություն էի խնդրում՝ ասելով, որ պետք է վազեմ երեխայիս հասնելու: Անշուշտ, կար ուրիշ պատճառ ևս:

Ընդհանրապես նա ճաշում էր «Արմենիա» հյուրանոցում, հետևաբար՝ ինքը պետք է վճարեր երկուսիս համար: Ինձ համար անասելի դժվար էր ընդունել նման հյուրասիրությունը, որին ես բնավ սովոր չէի: Իհարկե, երկու անգամ, ինչպես ասում են. «խաթորը չկտրելու համար» ընդունեցի հրավերը և գնացի: Ճաշարանի

աշխատողները ճանաչում և մեծ պատկառանքով էին դիմում նրան: Այստեղ մատուցող – garçon-ներից մեկը, որ ֆրանսահայ էր, Վարպետի հետ ֆրանսերեն էր խոսում Մարսելի բարբառով:

Պիտի ասեմ, որ, հակառակ իր մեծությանը, իր հպարտ և արժանապատիվ կեցվածքին, նա միաժամանակ չափազանց մաքուր ու ջինջ հոգի էր, պարզ, չպարտադրող պահվածքով:

\* \* \*

Ջարյանի հետ աշխատածս շրջանում ջանացել եմ ճշտապահ լինել, հարկ եղած դեպքերում աշխատել եմ նաև շաբաթ և կիրակի օրերը:

Սակայն պատահեց այնպես, որ գործի բերումով ուշացա 1 անգամ: Դռան առջև զանգը տալուց առաջ նայեցի ժամացույցիս՝ տեսնելով, որ ուշացել եմ 6 րոպե: Վարպետը դուռը բացելով սառը ձայնով ասաց.

– *Ուշանում ես...*

Ես ուզեցա բացատրել ուշացմանս պատճառը, բայց զգացի, որ բժախնդրությունից չէր նրա սառնությունը: Նա մենակ էր...

\* \* \*

Ժամանակն առաջանալով՝ առավել էի զգում Ջարյանի հանդեպ վերևից եկող անտարբերությունը: Շփումը, բացի իր ընտանիքից և որոշ մտավորականներից, չկար իրեն արժանի ճանաչումը, քանի որ գործերը չէին հրատարակվում:

Ջարյանը գնահատված էր անշուշտ ոչ կուսակցապաշտ մտավորականների կողմից, որոնք հիշարժան տողեր են նվիրել նրան, ինչպես Գևորգ Էմինը, Սիլվա Կապուտիկյանը, Աղասի Այվազյանը, Լևոն Հախվերդյանը, Վահագն Դավթյանը և ուրիշներ:

Ջարյանի դիմանկարը ստեղծեցին Մարտիրոս Սարյանը, Մինասը, Քնարիկ Վարդանյանը, դիմաքանդակը՝ Արտո Չաքմաքչյանը:






**Իտալացի ճարտարապետները Հայաստանում**




**Երևան, Արովյան № 17, Կոստան Զարյանի և Արմեն Զարյանի  
հուշատախտակը**



**«Սպանիա»**  
գրքի կազմը (1948 թ.)

**Հավատարիմ  
բարեկամություն  
Լևոն Ներսիսյան  
գործ՝ Արտո Չաքմաքչյանի**





**Խմբանկար՝ Անդրանիկ Քոչար, Կոստան Զարյան,  
Երվանդ Քոչար, Լևոն Ներսիսյան**

**Արմեն Զարյանը Աշտարակի  
Կարմրավոր եկեղեցու մոտ,  
1976**



Արտիկ Արարիկ  
 Իր ծայրունի ուղակ-  
 ցաքջառ համայն  
 Կարա՜ն Չարյան  
 Եփեման  
 11-19-66

**Կոստան Չարյանի  
 ձեռագիրը**

ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ԿԱՄԱՐԱԶՄԱՆԻ ԵՎ ԵՎԱՆՉԵՍԱԿԱՆ ԿԵՂԵՐՈՒՄԻ  
 ARMENIAN COMMUNITY AND CHURCH COUNCIL OF GREAT BRITAIN

ՀԱՐՑԵԼԻ ԼՈՒԴՈՆԱՀԱՅԵՐ  
 ԴՈՒՔ ՀՐԱՎԻՐՎՈՒՄ ԷՔ ՆԵՐԿԱ ՉՏԼՎԵԼՈՒ ԳԵՂԱՐՎԵՍԱ-ԵՐԱԺԵՏԱԿԱՆ ԵՐԵԿՈՅԻՆ  
 ՆՎԻՐՎԱԾ ՀԱՅ ՄԵԾԱՆՈՒՆ ԳՐՈՂ ՀՐԱՊԱՐԱԿԱԽՈՍ, ԲԱՆԱՍՏԵՂԾ

**ԿՈՍՏԱՆ ՉԱՐՅԱՆԻ**  
 ԾՆԱԳՆԱԼ 125 - ԴՆ ԱՄՅԱԿՈՒՆ:

ԾՐԱԳՐՈՒՄ ՁԵԿՈՒՑՈՒՄ ԵՎ ԺԵՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ,  
 ԵՆՈՐՀԱՆԻ ԵՐԻՏԱՍԱՐԻ ԿԱՏԱՐՈՂՆԵՐԻ ԵԼՈՒԹՅՆԵՐ

ՍՈՒՏՔԸ ԱՁՍՏ Է

---

*You are cordially invited  
 To honour one of the best Armenian poets and writers*

**Kostan Zaryan's**

**125<sup>th</sup> Anniversary**


Saturday – 14<sup>th</sup> May 2011 at 7:30pm  
 Navasartian Centre  
 223 Northfield Avenue, London W13 9QU 344/1  
 please visit our website [www.accc.org.uk](http://www.accc.org.uk)

Free and open to the public

**Լոնդոն, Կոստան Չարյանին նվիրված հանդիսություն**




**Լոնդոն, Կոստան Զարյանին նվիրված հանդիսություն  
Մանուել Ադամյան, Սեդա Անանյան**



**Արմեն Զարյան**



**Մարտիրոս Մարյանը Կոստան Զարյանի տանը, 1966**



**Կոստան Զարյան  
գործ՝ Արտո Չաքմաքչյանի**



# DOCUMENTI DI ARCHITETTURA ARMENA DOCUMENTS OF ARMENIAN ARCHITECTURE

Istituto di Umanistica, Facoltà di Architettura, Politecnico di Milano | Accademia delle Scienze dell'Armenia Sovietica  
Milan Polytechnic University, Department of Architecture, Humanities Institute | Armenian S.S.R. Academy of Sciences.



3


## SANAHIN

Seconda edizione / second edition

Il volume è dedicato al convento di Sanahin situato a poca distanza da quello di Haghbat, anch'esso uno dei più significativi complessi architettonici del X-XIII sec. I testi sono di O. Kh. Ghalpakhchian ed Adriano Alpago Novello / cronologia storica di Armen Zarian / 72 pagine nel formato 27 x 27 cm / 19 foto a colori e 17 in bianco-nero / 9 tavole di rilievi / traduzioni in inglese e in armeno.

This volume is dedicated to the Sanahin monastery, located a short distance from the one at Haghbat, and one of the most significant architectural structures of the Xth to the XIIIth centuries. Texts by O. Kh. Ghalpakhchian and Adriano Alpago Novello / chronological history by Armen Zarian / 72 pages in a 27 x 27 cm format / 19 color photos; 17 black and white / 9 pages of surveys / translations into Armenian.

«Հայկական ճարտարապետության վավերագրեր»  
շարից՝ «Սանահին»



Կոստան Զարյանը դստեր՝ Նվարդի հետ, Գեղարդ, 1965 թ.



## ՀՐԱԺԵՇՏ

«Սպանիա»-ն վերջացրել էի, բայց աշխատանք միշտ կար: Վարպետը օրական հանձնարարում էր որոշ բանաստեղծություններ մեքենագրել:

Նորից պիտի ասեմ, որ կեսօրյա իմ աշխատանքով ես կանգնած էի ահռելի մի գործի առջև. գրողի՝ տարիներով հրատարակված և անտիպ նյութերը, հոդվածները, նամակները, փակված սնդուկները...

Արմենի հետ երբեմն խոսում էինք այդ մասին: Հարցրի մի օր, թե չկա՞ որևէ հնարավորություն՝ Սփյուռքում գործերը հրատարակելու, որին նա պատասխանեց.

– *Պողոս Մասայանը (վերջինս 1964-ին Բեյրութում լույս տեսած «Ավագախրված նավը» աշխատության հեղինակն էր – Ս.Ա.) որոշել է հորս ամբողջական գործերը հրատարակել նրա մահից հետո»:*

Նայելով Արմենի մտահոգ դեմքին՝ գերադասեցի չշարունակել խոսակցությունը:

Ինչ վերաբերում է ինձ, Կոստան Զարյանին ոչ թե կես օրով աշխատող քարտուղար էր հարկավոր, նույնիսկ եթե նա տաղանդավոր մեկը լիներ, այլ հետազոտողների մի ամբողջ խումբ՝ արխիվը կարգավորելու, համակարգելու, ուսումնասիրելու: Իսկ ինձ թույլատրված ժամանակն արդեն լրացել էր, չասած, որ ինստիտուտի աշխատանքս շատ հետ էր մնացել: Վարպետը կարծես «մոռացել էր» այդ մասին, իսկ ինքս չգիտեի ինչպես խոսք բացել: Արմենի հետ որոշեցինք միասին խոսել: Նա լսեց, կարծես հանգիստ, ապա խոժոռված ասաց.

– *Դե ի՞նչ արած. ուրիշ բարեկամներ կան, Լեոն կա ... (խոսքը Ներսիսյանի մասին էր):*

Դա 1967-ի հունիսի 28-ն էր: Այդ օրը դուրս եկա Զարյանի տնից՝ ընկճված, ծանր մտորումներով: Քայլում էի՝ շուրջս կարծես ոչինչ տեսնելով: Չափազանցություն չի լինի, եթե ասեմ, որ 26 տարեկան էի, բայց ինձ զգում էի շատ ծեր ու տկար ... Գլխիս մեջ էին այդ պահին գրողի հուզիչ ու սքանչելի տողերը:

\* \* \*

Թեև այլևս չէի աշխատում Զարյանի մոտ, բայց անտարբեր չէի կարող մնալ նրա կացությանը:

Երբեմն այցելում էի՝ որպիսությունը հարցնելու, երբ մի օր ուրախ ասաց. «...նոր քարտուղար եմ գտել, որը Գևորգ Էմինի ազգականն է»: Ես նույնպես ուրախ էի:

1969-ի աշնանը իմացանք, որ հիվանդ է: Քրոջս հետ փոքր պատրաստություն տեսանք և այցելեցինք: Տանը պառկած էր, շատ փոխված, գունատ, տկար: Պատմեց, որ Մերձբալթիկայում է եղել: Ասաց.

*... Մի գիշեր ցրտեց, և լուսամուտը բաց էր, վեր կացա, ուզեցա փակել, չկարողացա...*

Դեկտեմբերի 13-ին լսեցինք մահվան բոթը: Ասացին, որ դագաղը դրվելու է Արվեստի աշխատողների տանը: Բոլորը հարցնում էին, թե ինչու Գրողների տանը չի դրված ...

Ուրացումը, այո՛, շարունակվում էր նույնիսկ մահից հետո:

Սգո արարողությունը կատարվեց դեկտեմբերի 16-ին նույն՝ Արվեստի աշխատողների տանը: Կարծես ամեն ինչ պատշաճ էր՝ պատվո պահակներ, հարգանքի տուրք, ծաղկեպսակներ, բայց հենուի իր արժանի գնահատանքից: Դագաղը կրում էին Լևոն Ներսիսյանը, Պողոս Հայթայանը, Արա Շիրազը (չորրորդը հավանաբար սփյուռքահայ ուսանող էր):

Թաղումը կատարվեց Քաղաքային պանթեոնում, սգո թափորը բազմամարդ չէր. իր ընտանիքից բացի, սակավաթիվ գրող-

արվեստագետներ, մտերիմներ, ընթերցողներ: Հիշում եմ հատկապես Թատերական և Բժշկական ինստիտուտների սփյուռքահայ ուսանողներին, որոնց մեջ Թորոս Թորանյանն էր:

Պանթեոնում դամբանական խոսք ունեցան Գուրգեն Բորյանը, Ստեփան Ալաջաջյանը, Սարգիս Մելիքսեթյանը և Գևորգ Էմինը:

Առավել քան ճնշող, ոչ սովորական լռություն էր տիրում:

Դեկտեմբերը սառն էր ու անտարբեր ...

\* \* \*

«Գրական թերթի» դեկտ. 19-ի համարը, որին անհամբեր սպասում էինք, 3-րդ էջը ամբողջովին նվիրված էր Կոստան Զարյանին՝ գրողի մեծադիր պատկերով: Ջերմ ու անկեղծ խոսքեր էին գետեղված Սիլվա Կապուտիկյանի («Գրքի վերջին էջը»), Գևորգ Էմինի («Բազմահարուստ կյանք»), Ստեփան Ալաջաջյանի («Վավերագրական գրողը») կողմից, ինչպես նաև Գրողների միության, Կուլտուրայի մինիստրության և Գրականության ու արվեստի թանգարանի ստորագրությամբ մահախոսականը:

Այս անգամ ամեն ինչ տեղին էր...

Կուզենայինք հիշել փոքր հատված Կապուտիկյանի վերոհիշյալ խոսքերից.

– Կոստան Զարյանն այն լեռն է, որի բարձրությունը տեսնելու համար հարկավոր է որոշ հեռավորություն:

Անցնող ժամանակը կատեղծի այդ հեռավորությունը, և այն ժամանակ մեծ ինտելեկտի գրողը ավելի կմոտենա մարդկանց, բազմությանը, համայն ժողովրդին:

Թերթի նույն էջի վրա տպագրված էր նաև Զարյանի վերջին բանաստեղծություններից, որոնցից մեկով կավարտենք մեր մտորումները:

ԿՈՍՏԱՆ ԶԱՐՅԱՆ. վերջին բանաստեղծություններից

\* \* \*

Մինչև ե՞րբ պիտի մնամ փակված

այս սենյակում՝

շրջապատված

լեռներով հեռավոր,

քամիներով երազների,

ուրվականներով և սեղանի

վրա դրված մանիշակով՝

պատմած հեքիաթ

շրթերիդ փսփսանքից քաղված:

Կեսբաց պատուհաններ,

բարձր ծառերի երերող կատարներ,

սրտի պարապություն,

ոտքս խաճնող մի ցավ դանակի

հարվածի նման անողոք...

Ես սպասում եմ քեզ, որ մինչև հիմա չկաս:

Երկնքից

ամպեր են իջնում և զանազան ձևեր առած՝

հեռանում:

Ես սպասում եմ, դու չկաս:

Մինչև ե՞րբ...

«Գրական թերթ», 19 դեկտ., 1969

## **ԿՈՍՏԱՆ ԶԱՐԵԱՆԻ ԾՆՆԴԵԱՆ 125-ԱՄԵԱԿ (1885–1969)**

### **ՄԵԾԱՐՄԱՆ ՀԱՆԴԷՍ ԼՈՆՏՈՆՈՒՄ**

Մայիսի 14-ին, շաբաթ օրը, Լոնտոնի Նալասարդեան սրահում տեղի ունեցավ գրական-գեղարուեստական շքեղ երեկոյ՝ նուիրուած հայ մեծանուն գրող, փիլիսոփայ, արուեստաբան Կոստան Զարեանին (1885–1969):

Ժամը 19-ից սկսեալ, մինչ հանդիսականները իրենց տեղերը կը զբաղեցնէին նորոգ ու գեղեցիկ դահլիճում, խոշոր պաստառի վրայ ցուցադրուած էին Զարեանի կեանքի տարբեր տարիների լուսանկարները:

Համայնքի ճանաչուած մտաւորական Մանուէլ Ադամեանը բացման խօսք ասաց, որից յետոյ պատմեց իր անձնական հանդիպումներն ու յիշողութիւնները մեծ գրողի մասին՝ Պէյրութում եւ Երեւանում:

Այնուհետեւ Զարեանի կեանքն ու գործը հանգամանօրէն ներկայացրեց տողերիս հեղինակը, որը 1966–67 թթ. աշխատել է գրողի հետ, որպէս նրա քարտուղար-օգնական: Բանախօսը, ըստ ժամանակագրութեան, ծանօթացրեց հեղինակի հիմնական գործերը («Անցորդը եւ իր ճամբան», «Տատրագոմի հարսը», «Բանկոռպը եւ մամութի ոսկորները», «Սպանիա», «Միացեալ Նահանգներ», «Նաւը լերան վրայ», «Կղզին եւ մի մարդ», եւլն)՝ նշելով, որ յիշեալ ստեղծագործութիւնները առաջին անգամ տպագրուել են Պոսթընի «Հայրենիք» ամսագրում: Նա կարեւորեց նաեւ այն հանգամանքը, որ չնայած Կոստան Զարեանի անհատականութիւնն ու գեղագիտական մտածողութիւնը ձեւաւորուել են եւրոպական, յատկապէս

իտալական մշակույթի միջավայրում, նա աներկբայ իրեն զգացել է հայ գրող, «կ'ասեինք՝ հայ՝ ժողովրդի ճակատագիրը որոնող մի մարգարէ», ասաց բանախօսը:

«Հայաստանում ապրած տարիներին (1962–1969) իշխանութեան յանիրաւի որոշ կեցուածքից մեծ գրողը թէւ չունեցաւ իր արժանի լայն ճանաչումը, սակայն նա մեծապէս յարգուած էր մտաւոր դասակարգից՝ իր ներկայութեամբ շքեղացնելով Երեւան մայրաքաղաքը», իր խօսքն ամփոփեց բանախօսը:

Յաջորդ խօսնակը բանասէր Թամար Գեղամեան-Մինասեանն էր, որը մեկնաբանեց Զարեանի «Նաւը լերան վրայ» (Պոսթըն, 1943 թ.) ծաւալուն վէպը՝ տալով իր ուրոյն եւ դիպուկ վերլուծութիւնը այդ գործի գաղափարական բովանդակութեան եւ հայ ժողովրդի ճակատագրով մտահոգ գրողի պայծառատեսութեան:

Վերջին բանախօսը դոկտ. Գագիկ Թամանեանն էր (անուանի ճարտարապետ Ալեքսանդր Թամանեանի թոռը), որը խօսեց Զարեանի «Երեք երգեր» վիպերգի իտալերէն հրատարակութեան (1916) մասին: Նա նշեց, որ այս ստեղծագործութեան ներշնչմամբ Օթթորինօ Ռեափիկին (1879–1936) յօրինում է « La Primavera » կոչուող գանթաթը 1919ին:

Երեկոյին Սլովաքիայի ռատիոյի սիմֆոնիք նուագախմբի եւ ֆիլհարմոնիք երգչախմբի կատարմամբ լսուեց մի հատուած այդ գանթաթից:

Հանդէսին իր շնորհալի մասնակցութիւնը բերեց ներկայիս Կլազկոյի (Սկովտիա) երաժշտանոցի ուսանողուհի, գեղատես եւ խոստումնաշատ երգչուհի Անոյշ Յովհաննիսեանը, որ բացառիկ զգացողութեամբ կատարեց Նարեկացու խօսքերով «Հաւուն-հաւուն» երգը եւ Կոմիտասի «Օրոր»ը:

Ելոյթներ ունեցան նաեւ պատանի ջութակահար Գրիգոր Յարութիւնեանը (Փականինի՝ «Գանթապիլէ») եւ 12-ամեայ Շուշանիկ

Յարութիւնեանը (Փօլ Հարիս՝ «Ֆանթասթիք ֆինալ», գլարինէթի համար):

Այնուհետեւ Րաֆֆի Եղիկեանը մեծ ներշնչումով արտասանեց Կոստան Զարեանի «Ձին, գարունը եւ Հայաստանը» բանաստեղծութիւնը:

Հանդէսն աւարտուեց Զարեանի «Կոմիտաս Վարդապետին» հոգեցունց բանաստեղծութեան ձայնագիր ունկնդրմամբ: Կարդում էր սիրուած դերասան Վոլոտիա Աբաջեանը, որին ձայնակցում էր Հայաստանի Պետական երգչախումբը՝ առաւել արտայայտչականութիւն հաղորդելով դերասանի ասմունքին:

Հանդիսականները հեռացան դահլիճից՝ խորապէս տպաւորուած եւ գոհ՝ իրենց հետ մասնիկ տանելով Կոստան Զարեանի հայրենաշունչ ոգուց:

Շնորհակալութիւն «Նաւասարդեան կենտրոն»ի պատասխանատու անձնակազմին, որոնք ջանք չէին խնայել աջակցելու հանդէսին, շնորհակալութիւն երեկոյի կազմակերպիչներին՝ հետաքրքիր ու բովանդակալից միջոցառման համար: Հեռակայ շնորհակալութիւն (Սեդա Անանեանի խնդրանքով) զարեանասէր եւ զարեանագէտ, երեւանաբնակ պարոն Սարգիս Խաչենցին՝ իր նիւթերը բարեացակամօրէն հանդէսին տրամադրելուն, որ մեծապէս նպաստեց օրուայ յաջողութեանը:

Յոյսով ենք, որ նման միջոցառումներ աւելի յաճախ կ'ունենայ լոնտոնահայ համայնքը:

*Ս. Ա., Լոնտոն  
«Նոր Յառաջ», 2011, յունիս 2*

## ՀՈՒՇԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝ ՆՎԻՐՎԱԾ ԿՈՍՏԱՆ ԶԱՐՅԱՆԻՆ

Նոր սերունդը (և ոչ միայն) հավանաբար ըստ արժանվույն չի ճանաչում հայ ժողովրդի մեծատաղանդ գավակներից մեկին, որն իր ստեղծագործական ու գիտական կարողություններով մեծապես նպաստել է հայ գրականության և մշակույթի առաջընթացին՝ թողնելով մեծ ու արժեքավոր ժառանգություն գալիք սերունդներին: Խոսքը մեծանուն գրող, բանաստեղծ, արվեստաբան-փիլիսոփա Կոստան Զարյանի մասին է:

2010-ին լրացավ անվանի գրողի ծննդյան 125-ամյակը, որը ցավոք չնշվեց ըստ արժանվույն: Մխիթարականն այն էր միայն, որ արվեստաբան-գրականագետ Երվանդ Տեր-Խաչատրյանի աշխատասիրությամբ «Սարգիս Խաչենց» հրատարակչությունը մինչ այդ լույս էր ընծայել երեք հատոր մեծ գրողից:

Մեկ տարի անց՝ 2011-ին, Երևանի պետական համալսարանի հրատարակությամբ Կոստան Զարյանի մասին լույս տեսավ Սեդա Անանյանի «Հուշագրությունը», որին քաջալերել է անվանի լրագրող, հրապարակախոս Մարգո Ղուկասյանը: Հուշագրության հեղինակ Անանյան-Հարությունյանը 1966–67 թթ. աշխատել է մեծանուն գրողի հետ որպես նրա օգնական-քարտուղար՝ հիմնականում զբաղվելով նրա ստեղծագործությունների դասակարգման, մեքենագրման աշխատանքներով: Նույն այդ տարիներին Անանյանն աշխատել է միաժամանակ Հայաստանի գիտությունների ակադեմիայի արվեստի ինստիտուտում՝ լավատեղյակ լինելով ոչ միայն Կոստան Զարյանի ստեղծագործությանը, այլև հայ արվեստի տարբեր բնագավառներին՝ թատրոնին, նկարչությանը, ճարտարապետությանը:



Հուշագրությունից իմանում ենք, որ Զարյանի մտերիմ-բարեկամներից է եղել նաեւ եվրոպական գրականության լավագույն գիտակ Լևոն Ներսիսյանը, որն այդ տարիներին դասախոսում էր Երևանի պետական համալսարանում անտիկ գրականություն, այդ նույն առարկան 1922–24 թթ. նույն համալսարանում դասավանդել էր Կոստան Զարյանը:

«Արվեստի ինստիտուտում իմ աշխատանքի առաջին տարիներն էին,– գրում է Ս. Անանյանը, որ ուշիուշով կազմում էի պահանջված նյութերի ցանկը «արգելված» մամուլից, ի թիվս նաեւ «Հայրենիքի», որտեղ հանդիպեցի Կոստան Զարյանի նա՛եւ արվեստաբանական հոդվածներին.

«Ե. Վախթանգյանը եւ իր թատերական ստուդիան», «Հայաստանի նկարիչները», «Բյուզանդագետների համագումարը եւ հայերը»... Հեղինակը այնուհետև շարունակում է. «Բոստոնի «Հայրենիք»-ում լույս տեսած այդ հոդվածներից ինձ առանձնակի հետաքրքրեց Վախթանգովը (1883–1922): Զարյանի կենսագրությանը դեռ անծանոթ, մտածեցի՝ Բոստոնի «Հայրենիք»-ն ո՛ր, ռուսահայ Վախթանգովն ո՛ր...»:

Հուշագրության մեջ հանդիպում ենք Զարյանի հետևյալ իմաստուն խոսքին. «...Հայը իր հայրենիքից դուրս դադարում է հայ լինելուց, որովհետեւ նա իր ազգային դիմագիծը պահում է այնքան ժամանակ, ինչքան ժամանակ որ հիշում է իր գյուղը, իր տան մոտից անցնող վտակը, բակի ընկուզենին: Ինչքան ժամանակ, որ իրեն զգում է ժամանակավոր գաղթական վտարանդի...»:

Անանյանը հիշարժան տողեր է նվիրել Կոստան Զարյանի որդուն՝ անվանի ճարտարապետ Արմեն Զարյանին, նույնպես հայրենիքի նվիրյալ մի անհատականություն: Հայկական հանրագիտարանում աշխատող ճարտարապետ Արա Ստեփանյանի հետ մի

գրույցի ժամանակ, երբ վերջինս հարց է տալիս նրան, թե մտածե՞լ է Իտալիա վերադառնալու մասին, Զարյանը պատասխանում է.

– Հասկացիր, Արա՛, ես գինվոր եմ եւ չե՛մ կարող դասալիք լինել...

– Կոստան Զարյանի գործերը Կենտկոմի առաջին քարտուղար Յակով Զարոբյանի կարգադրությամբ պետք է տպագրվեին վեց հատորով, գրում է Անանյանը: Սակայն Զարոբյանի պաշտոնափոխությունից հետո դա չիրագործվեց՝ կառավարության հանիրավի կեցվածքի պատճառով՝ բնականաբար մեծ ցավ պատճառելով գրողին: Նրա կենդանության օրոք տպագրվել են միայն «Նավը լերան վրա» վեպը՝ անցանկալի փոփոխություններով և «Տատրագոմի հարսը» դյուցազներգությունների ժողովածուն: Գրքի մեջ մեծ գրողին բնորոշ տողեր է նվիրել անվանի թատերագետ-գրականագետ Լևոն Հախվերդյանը. «Որքան էլ ազգակից, իմաստով շատ են տարբեր երկյուղածություն և երկյուղ բառերը: Երբ գրույցի ես նստում Կոստան Զարյանի հետ, դրանք իմաստով էլ մոտենում են, գրեթե նույնանում, որովհետև եթե արտիստական այդ շքեղ կերպարանքը, այդ վեհատեսիլ ծերունագարդ մարդն իր ամբարած իմացությամբ և մտքի անկախ թռիչքով հարուցում է պատկառանք ու երկյուղածություն, ապա մեզ համար սրբություն ու հեռավոր առասպել դարձած մեծերի հետ ունեցած շփումների անճիգ մտաբերումներն այնքան շատ են ու ազդու, որ հարուցում են մի զգացում, որ հեռու չէ երկյուղից»:

Սեդա Անանյանի «Հուշագրությունը» գրված է անկեղծ ականատեսի նվիրումով, որը զուսպ, բայց տեսանելի ներկայացնում է Կոստան Զարյանին ոչ միայն որպես մեծատաղանդ գրող-արվեստաբան, այլև շենշող, հզոր անհատականություն, մեկը, որ խորապես ապրել է իր Հայրենիքի ճակատագրով ու նրա ապագայով:

**ԴԵՐԵՆԻԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

**«Ազգ», 18 ապրիլ, 2012**

## ԱՆԴՐԱԴԱՐՁ

«Հայ ազգը պէտք ունի թէ զէնքով կոռուող հերոսների եւ թէ  
մանաւանդ մտաւոր ազնուական դասի:  
Այն, որ ես անուանում եմ Արարատեան մարդը»:

### Կոստան Զարեան

«Նոր Յառաջ»ի անցեալ Նոյեմբերի 3,5,7, համարների մէջ  
յաջորդաբար լոյս տեսաւ Մինիիսի Լիւովիկ-Մաքսիմիլիան հա-  
մալսարանի գիտական աշխատակից էլքը Հարթմաննի ուշագրաւ  
ուսումնասիրութիւնը<sup>1</sup> նուիրուած 20րդ դարասկիզբի հայ ազգային  
գործիչ Ռուբէն Տէր-Մինասեանի (1881–1951) վաւերագրական մե-  
նագրութեան:

Նշենք անմիջապէս, որ յօդուածագիրը յիշեալ աշխատութիւնը  
իրաւամբ բնորոշել է «ինքնավկայագրութեան առարկայ եւ պատ-  
մագրական աղբիւր»: Ռուբէնի «Յիշատակներ»ը աներկբայ մեծ  
կարեւորութիւն ունի յիշեալ ժամանակաշրջանի որպէս ականա-  
տես հերոսի հաւաստի խոստովանանք-վկայութիւն, միաժամա-  
նակ անգնահատելի աղբիւր հանդիսանալով հայ ազգային պատ-  
մագրութեան համար: «Յիշատակներ»ի նոյնքան կարեւոր արժա-  
նիքը յօդուածագիրը համարում է պատմող-հերոսի անձնական  
կեանքը որպէս «ուղեցոյց-օրինակելիութիւն» ապագայ սերունդնե-  
րի դաստիարակութեան համար, մարդիկ՝ որոնք կարող են «ան-  
հատական շահը զոհել ի խնդիր հաւաքականութեան շահին»:

Թուում է քիչ չէ ու շատ է մի մարդու համար այսքանը, սակայն  
հարկ կը համարենք աւելացնել, որ Ռուբէնի «Յիշատակներ»ը իր

---

<sup>1</sup> Էլքը Հարթմանն. «Ռուբէնի «Հայ յեղափոխականի մը յիշատակները»  
ինքնավկայագրութեան առարկայ եւ պատմական աղբիւր»:

բարերար խթանիչ ազդեցությունն է ունեցել նաեւ Հայ գրականության չափաժոյ թէ արձակ որոշ ստեղծագործությունների վրայ: Հիշեցնենք, որ «Յիշատակներ»ը առաջին անգամ տպագրուել է Պոսթրնի «Հայրենիք» ամսագրի մէջ՝ 1928ին, մեծ հետաքրքրություն առաջացնելով իր շուրջը: Նոյն թուականին «Հայրենիք»ը յաջորդաբար տպագրում էր Կոստան Զարեանի (1885–1969) «Անցորդը եւ իր ճամբան» (1926 Հոկտեմբեր –1928 Փետրուար) ծաւալուն վէպը:

«Հայրենիք»ը 1930ին տպագրում է նաեւ Զարեանի «Տատրագումի հարար» պոէմ-վիպերգը՝ ներշնչուած Ռուբէնի «Յիշատակներ»ից: Նոյն թուականին պոէմը տպագրում է «Հայրենիք»ի կողմից՝ առանձին շքեղ գրքով, «Նուէր Ա. Ահարոնեանին», հեղինակի ընծայագրով: Պոէմ-վիպերգը մեծ ոգեւորութեամբ է ընդունում մտաւորական շրջանակում՝ արժանանալով Արշակ Զօպանեանի, Ռուբէն Դարբինեանի, Աւետիս Ահարոնեանի, Կարօ Սասունիի եւ այլոց դրուատանքին, ինչպէս նաեւ սփիւռքահայ որոշ գրողների նախանձ-չարութեանը: Նախանձ-չարութիւն, որ ուղեկցել է մեծ գրողին իր ողջ կեանքում, ոչ միայն Սփիւռքում, այլեւ Հայրենիքում: Սա ցաւոտ տարբեր թեմա է:

Եթէ «Յիշատակներ»ի հեղինակը եւ իր զինակից ֆէտայիները ճշմարիտ-հաւաստի անձնաւորութիւններ են, ապա Զարեան գեղագէտը նրանց անմահացնում է որպէս դիւցազուններ. դիւցազուններ, որոնք անձնական կեանքը կարող են զոհաբերել իրենց դաւանանքին:

Կարճ հատուած.

«Լռիկ խստադէմ, ընդմիջտ

ուխտ արած պատերազմիկներ,

Վայրի կատուի ցատկոտող քայլով,

Մագլցում էին Սասնայ լեռները,

շուք էին դառնում աւանների մօտ,

Կախում ժայռերից, անցնում վրիժերը,  
Եւ յոգնած շնչով մի երգ մոռնում՝  
Կոխելու համար նոր զառիվերը»:

(t<sub>2</sub> 26)

Եւ ապա՝  
«Յետոյ սեղմ շարքով,  
Դիցագներգական աստուածների  
          պէս՝ գալիս են տես,  
Չերբէզ փափախի վարսերը երկայն  
          գլխին թափ տալով՝  
Ռետինէ մարմին եւ կապոյտ  
          աչքեր՝ եռուն Ռուբէնը,  
Նորման իշխանի խարտեաշ  
          մազերով Մանուկ Շենրկին.  
Գունաթափ Չոլօն, եզան պէս  
          ուժեղ, բիրերի շուրջը  
Կարմիր երակներ՝ կռուազան  
          Ախօն.

Ընթիշի նման ցատկոտող  
 Հարօն, կարշնեղ Զաւէնր,  
 Յօնքերը կիտաժ, աչքերը  
 քուրայ՝ Յովհան Ֆէտային:  
 Ձիւնը տնքում է նրանց քայլերի  
 յամառ թափի տակ»:

Պոեմ-վիպերգի երկրորդ հրատարակությունը հեղինակի կեն-  
դանության օրօք եղաւ Երեսնամ 1965ի վերջերին: Գրքի յառա-  
ջաբանը գրել է Վահագն Դաւթեանը, ըստ արժանւոյն գնահատե-  
լով այն, յիշեցնելով ֆէտայիներին անուններով, բայց ո՛չ մտայ-  
նացման ակնյայտ աղբիւրը: Ընկերվարական իրապաշտութեան  
վարդապետական (dogmatique) միջավայրում այս գործը բացառիկ

նոր ու անսովոր էր թէ՛ գեղագիտական մտայնացմամբ եւ թէ արտայայտչական բանաստեղծութեան ձեւի մէջ: Ազդեցութիւնը անվիճելի էր ժամանակակից շատ գրողների ստեղծագործութիւնների վրայ, հակառակ որ լռութեան մատնուեց մամուլի կողմից, որը եւ Զարեանի նկատմամբ կառավարութեան ուրացման դիրքորոշման շարունակութիւնն էր:

Միակ գրախօսականը գրուեց երջանկայիշատակ Ալպերթ Կոստանեանի կողմից «Յղացման ազնւութիւնը» վերնագրով, որ լոյս տեսաւ միայն 1967ին «Գրական թերթ»ի Մարտ 24ի թիւի մէջ, կրճատուած, աղճատուած, մեծ ցաւ պատճառելով գրականագէտին: Այնուամենայնիւ այդ յօդուածի մէջ կարդում ենք Կոստանեանի հետեւեալ կարեւոր տողերը.

- «Տատրագումի հարսի հիմքում ընկած է ականարկած շրջանի մի մասնաւոր միջադէպ, որ վաւերացուած է նաեւ ականատեսի յուշերով» (ընդգծումը – Ս.Ա.): Խօսքը անշուշտ Ռուբէնի մասին է:

Կոստան Զարեանի գրականութեան լայն ճանաչումը, ինչպէս յայտնի է, Հայաստանում սկսուեց 90ականների վերջերից, երբ արդէն տպագրում էին գրողի ոչ միայն ստեղծագործութիւնները, այլեւ յօդուածներ, հաղորդումներ, ուսումնասիրութիւններ գրողի մասին: Այդ առումով մեծապէս գնահատելի է գրականագէտ Եւորի Խաչատրեանի հետեւողական աշխատանքը Զարեանի գործերի հետազօտման եւ հրապարակման ասպարէզում:

Այժմ կարելի է ասել, որ Հայաստանում (Սփիւռքը իր կարգին) առկայ է զարեանագէտների մի ամբողջ դաս (աւա՛ղ ուշացումով), որոնց թում յատկապէս Պետական Համալսարանի հայ բանասիրության բակալաւրեատի դեկան փրոֆեսօր Արծրուն Աւագեանի մեծարժէք գիտական ուսումնասիրութիւնը («Կոստան Զարյան, Կյանքը և գործը») Զարեանի մասին: Այս գրքի (254 էջ) 26 էջերը նուիրուած են «Տատրագում»ին, վերնագրուած՝ «Անկարելի բառերով հիւսուած լեզենդը», որտեղ կարդում ենք.

«Պոէմի նիւթը Զարեանը քաղել է 20 թուականների վերջերին. Պոսթրնի «Հայրենիք» ամսագրում տպագրուող Ռուբէնի (Տէր-Մինասեան) «Հայ յեղափոխականի մը յիշատակները» գործից»։ Արժեւորելով պոէմը՝ հեղինակը այն անուանում է «հերոսավէպ», իսկ Զարեանին տալիս հետեւեալ գնահատութիւնը.

«Զարեան արուեստագէտին բնորոշ են մտքի արտասովոր թռիչքները, փիլիսոփայական խորացումները, պատկերների կերտման անսովոր ձեւերը, արտայայտման առեղծուածութիւնը, վերացական մտածողութիւնը, ուժեղ երեւակայութեան յորձանքը, նաեւ երեւոյթը տարբեր հայեցակէտերից դիտելու եւ իմաստաւորելու միտումը» (էջ 64)։

Ամփոփելով մեր խոսքը «Յիշատակներ»ի եւ «Տատրագոմ»ի առնչութեան շուրջ՝ վերադառնալով ունեցայ պարտաւորեցնող զգացողութիւն. յանձինս ճակատագրով ու զոր ծով տարբեր երկու մեծ Հայի, մէկը իբրեւ անձնուէր հերոս-զինուոր, ազգային գործիչ, միւսը հայրենապաշտ բարձր մտաւորական, երկուսն էլ օրինակելիութիւններ Հայութեան համար։

«Վերապրե՛լ օգտակար լինելու Ազգին»

Ռուբեն Տէր-Մինասյան

Սեդա Անանյան, «Նոր Զառաջ», հունվար 19, 2016

## ԻՐԻՆԿԱՆ ՎԵՐՋԱԲԱՆ

Ինչպես հայտնի է Կոստան Զարյանի գործերի՝ պետհրատի կողմից պայմանագրով հաստատված վեց հատորի փոխարեն 1967-ին որոշվեց հրատարակել միայն «Սպանիան», որը լույս տեսավ միայն 1998-ին՝ գրողի մահից 28 տարի անց...

Մեծ գրողի ծննդյան 125-ամյակի առթիվ Փարիզի «Նոր Յառաջի» էջերում 2011-ին ունեցանք մեր համեստ հոդվածաշարը, որը նույն թվականին փոքրիկ գրքույկով լույս տեսավ Երևանի համալսարանի հրատարակությամբ:

Կոստան Զարյանի մահվանից այժմ անցել է ավելի քանի հինգ տասնամյակ. այսօր ազնիվ և շնորհալի մարդկանց ջանքերով Հայրենիքում և Սփյուռքում լույս աշխարհ են գալիս Մեծ գրողի հատորները՝ իբրև վերագտնված գանձեր ու մեծ պարգև մեր ժողովրդին:

Այդ հատորներից ութը, որ այժմ գրասեղանիս են շարված, ինձ նույնպես կարծես պարտավորեցրին վերստին անդրադառնալ օրագրիս գունաթափ էջերին, որպես վկայություն՝ այդ դժնդակ ու անարդար տարիների, որ ցավոք ապրեց Մեծ գրողը:

«Հուշագրության» ներկա հրատարակությունը ընթերցողին է ներկայացվում լրացված և վերախմբագրված օրինակով:

*Սեդա Անանյան*



## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

|                                                                           |    |
|---------------------------------------------------------------------------|----|
| Տարողունակ և կարևոր մտորումներ կամ Արովյան 17 .....                       | 3  |
| Անտես ծանոթություն .....                                                  | 9  |
| Իտալացի ճարտարապետները Հայաստանում<br>(Ծանոթություն Կոստան Զարյանի) ..... | 15 |
| Երևան, Արովյան 17 .....                                                   | 21 |
| «Սպանիա» .....                                                            | 25 |
| «Նավը» ռուսերեն .....                                                     | 31 |
| Ծաղկաձոր .....                                                            | 38 |
| Հավատարիմ բարեկամություն .....                                            | 44 |
| «Աստղեր և արյուն» .....                                                   | 50 |
| Արմեն Զարյան .....                                                        | 56 |
| Մեծն զարմանալի Կոստան Զարյանը .....                                       | 61 |
| Հրաժեշտ .....                                                             | 65 |
| Կոստան Զարեանի ծննդեան 125-ամեակ (1885–1969)                              |    |
| Մեծարման հանդես Լոնտոնում .....                                           | 69 |
| Հուշագրություն՝ նվիրված Կոստան Զարյանին .....                             | 72 |
| Անդրադարձ .....                                                           | 75 |
| Իբրև վերջաբան .....                                                       | 80 |

ՍԵԴԱ ԱՆԱՆՅԱՆ

ԿՈՍՏԱՆ ԶԱՐՅԱՆ

ՀՈՒՇԱԳՐՈՒԹՅՈՒՆ

(Երկրորդ լրամշակված հրատարակություն)

Հրատ. խմբագիր՝ Ա. Սահակյան  
Համակարգչային օպերատոր՝ Ն. Ադամյան

Հրատ. պատվեր N 1194  
Ստորագրված է տպագրության 28.10.2022 թ.:  
Չափսը՝ 60x84<sup>1</sup>/<sub>16</sub>: 5.5 տպ. մամուլ:  
Տպաքանակը՝ 130 օրինակ:

ՀՀ ԳԱԱ տպարան,  
Երևան, Մարշալ Բաղրամյան պ., 24